ՍԵՌԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՌԱՖԻԿ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Disclaimer

Նյութը պատրաստվել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսավորմամբ: Արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշումը: Նյութում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտացոլեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի տեսակետները:

This material has been funded by UK aid from the UK government. The views expressed do not necessarily reflect the UK government's official policies. The views expressed are those of the authors and do not necessarily represent those of the UNDP.

Designed by Proper Studios, Yerevan, Armenia

PROPER

Disclaimer 2
Նախաբան 8
Սեռ բառի կիրառությունը 8
Եզրույթների թարգմանության սկզբունքները 10
Access and control over resources / Ռեսուրսներին հասանելություն և դրանց տնօրինում 13
Affirmative Action / Հաստատական գործողություն. 14
Androcentrism / Արակենտրոնություն 16
Androgyny / Արվէգություն 18
Autonomy / Ինքնավարություն. 20
ա. ֆիզիկական ինքնավարություն, ... 20
բ. տնտեսական ինքնավարություն, ... 20
գ. որոշման ինքնավարություն, ... 20
Beijing Platform for Action (BFA) / Պեկինի գործողությունների ծրագիր (ՊԳԾ) 21
Binary / Կրկնակ, երկբևեռ, բինար. 22
Non binary / անկրկնակ, ոչ բինար 22
Bullying / Նշավակում 23
Verbal bullying / բանավոր նշավակում. 23
Sexual bullying / Սեռական նշավակում 24
Commission on the Status of Women (CSW) / Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողով 25
Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women (CEDAW) / Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա 26
Decent work / Արժանապատիվ աշխատանքը 27
Decision-making and participation / Որոշումների կայացում և մասնակցություն 28
Declaration on the Elimination of Violence against Women / Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիր 29

Discrimination against girls and women / Աղջիկների և կանանց դեմ խտրությունը. 30
Empowerment of women and girls / Կանանց և աղջիկների զորացում . . 31
Feminization of poverty / Աղքատության կանացիացում 32
Gender / Սեռ, գենդեր 33
Gender (or sexual) division of labor / Աշխատանքի բաժանումն ըստ սեռի 34
ա. արտադրական դերեր (production roles), ... 34
բ. վերարտադրական դերերը (reproductive roles) 34
գ. համայնքային տնտեսվարման դերը (community managing role) 34
դ. համայնքային քաղաքական դերերը (community politics role) 35
ե. եռակի դերը (triple role) 35
Gender advisor / Սեռային կամ գենդերային հարցերով խորհրդատու . . 35
Gender analysis / Սեռային կամ գենդերային վերլուծություն. 36
Gender audit / Սեռային կամ գենդերային հաշվեքննություն. 37
Gender Blindness / Սեռի անտեսում. 38
Discrimination / Խտրություն 38
Gender Discrimination / Սեռով պայմանավորված խտրություն 39
Gender diversity / Սեռաբազմազանություն 40
Gender equality / Սեռահավասարություն 40
Gender equity / Սեռային արդարակշռություն. 41
Gender focal point / Սեռային/Գենդերային հարցերով պատասխանատու. 43
Gender gap / Սեռային կամ գենդերային անջրպետ 44
Gender identity / Սեռային կամ գենդերային ինքնություն. 45
Gender inequality index (GII) / Սեռային կամ գենդերային անհավասարության ցուցանիշ 46
Gender mainstreaming / Սեռային հատկանիշի համընդգրկում 46
Gender norms / Սեռային կամ գենդերային նորմեր 48

Gender parity / Սեռային կամ գենդերային հավասարաբաշխումը 48
Gender perspective / Սեռային կամ գենդերային հայեցակետը 49
Gender relations / Սեռային կամ գենդերային հարաբերություններ. . . . 49
Gender roles / Սեռային կամ գենդերային դերեր 50
Gender stereotypes / Սեռային կամ գենդերային կարծրատիպեր. 51
Gender-based Violence (GBV) / Սեռահեն բռնություն. 52
Ֆիզիկական բռնությունը 52
Խոսքային բռնությունը 53
Սեռական բռնությունը. 54
Հոգեբանական բռնությունը 54
Սոցիալ-տնտեսական բռնությունը 55
Gender negative / Սեռային կամ գենդերային առումով բացասական . . 55
Gender neutral / Սեռային կամ գենդերային առումով չեզոք 56
Gender sensitive / Սեռազգայուն, գենդերազգայուն 56
Gender positive / Սեռային/գենդերային առումով դրական. 56
Gender transformative / Սեռային կամ գենդերային առումով փոխակերպական 57
Gender-responsive budgeting / Սեռային կամ գենդերային առումով փոխասական բյուջետավորում 57
Glass ceiling / Ապակյա առաստաղ. 58
Hegemony / Գերիշխանություն 58
Hegemonic masculinity / Գերիշխ-ող/-անական առնականություն 58
Hegemonic femininity / Գերիշխ-ող/-անական կանացիություն. 60
Heteronormativity / Տարասեռականության հիմնաչափություն 61
Human rights / Մարդու իրավունքներ. 62
Human rights-based approach (HRBA) / Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում (ՄԻՀՄ) 63
Implicit bias / Ներակա կողմնակալություն, խոտորում 65
Inter-Agency Network on Women and Gender Equality (IANWGE) / Կանանց և գենդերային հավասարության միջգերա-տեսչական ցանցը. 66

Intersectionality / Փոխհատականություն 67
Intersexuality / Միջսեռականություն 68
Marginalization / Լուսանցքավորում 69
Masculinity / Առնականություն 70
Menopause / Դաշտանադադար 71
Menstruation / Դաշտան, ամսահոսություն 71
Multiple discrimination / Բազմակի խտրություն 73
Patriarchy / Նահապետություն, նահապետականություն, հայրիշխանություն 74
Postcolonial feminist theory / Հետգաղութային ֆեմինիստական տեսություն 75
Power / Իշխանություն 76
Queer / Տարօրինակ, քվիր 77
Reproductive rights / Վերարտադրական իրավունքներ 78
Reverse sexism / Հակադարձ սեռային խտրություն 79
Sex (biological sex) / Սեռ, կենսաբանական սեռ 80
Sex-disaggregated data / Սեռով զատորոշված տվյալներ 80
Sexual and reproductive health and rights (SRHR) / Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունքներ 81
Sexual orientation / Սեռական ուղղություն 82
Sexual behavior / Սեռական վարք(ագիծ) 83
Sexual Rights / Սեռական իրավունքներ 84
Son Preference / Արու զավակի նախապատվություն 85
Stalking / Հետամտում 85
Unpaid care work / Անվարձահատույց խնամք 86
Victim blaming / Տուժողին պարսավելը 87
Victimization / Զոհարկում 88
Violence against women / Կանանց նկատմամբ բռնություն 89
Women’s economic empowerment / Կանանց տնտեսական զորացում . . 90
Xenophobia / Այլատյացություն 91

Նախաբան

Սեռահավասարության և սոցիալական արդարության շուրջ ծավալված ժամանակակից գիտական և հանրային խոսույթը փաստում է լեզվական ճշգրտության կարևորությունը: Լեզուն ոչ միայն արտացոլում է սոցիալական աշխարհը, այլև նպաստում է դրա վերարտադրությանը, այդ թվում՝ գենդերային և այլ համակարգային անհավասարությունների պահպանմանը կամ վերափոխմանը: Սեռահավասարության բառացանկի մշակման հիմնական նպատակը թեմային առնչվող բառապաշարի հղկումն ու մշակումն է հայերենով: Բառային միավորների ընտրությունը հիմնված է ՄԱԿ-ի առկա բառացանկի վրա, սակայն աշխատանքի ընթացքում ավելացվել են նոր բառային միավորներ և լրամշակվել են սահմանումները՝ տեղ-տեղ տրամադրելով հայկական համատեքստին հատուկ բացատրություններ: Այս մոտեցումը թույլ է տալիս ոչ միայն ապահովել միջազգային եզրույթների համարժեք օգտագործումը հայերենում, այլև վերարժևորել ու վերականգնել լեզվամտածողության ներուժը՝ խուսափելով անտեղի փոխառություններից:

Սեռ բառի կիրառությունը

Այս բառացանկում «սեռ» և «գենդեր» (sex/gender) բառերն օգտագործվում են փոխարինաբար՝ ընդգծելով, որ հայերենում այն հիմնականում գործածվում է սեռի հանրաբանական ընկալման, այսինքն՝ գենդերի նշանակությամբ: Չնայած միջազգային գիտական խոսույթում սեռի կենսաբանական և հանրաբանական ընկալումները հստակորեն տարբերակվում են, հայերենում դրանց միջև խիստ տարանջատում չի ամրապնդվել, և գործնականում «սեռ» բառը հաճախ ներառում է նաև գենդերի իմաստը: Այլ կերպ ասած՝ գենդեր բառի հայերեն համարժեքը սեռն է, և հայերենում սեռ բառն օգտագործվում է մեծամասամբ գենդեր իմաստով: Ռոմանագերմանական լեզուներին հատուկ տարանջատման օրինաչափությունը պարտադրելը հայերենում խնդիր է ստեղծում երևույթը լիարժեք ընկալելու համար: Անգլերենում

և ֆրանսերենում, օրինակ, «գենդեր» բառի շրջանառությունը տասնամյակներ առաջ դարձել է անհրաժեշտություն՝ այն «սեքս» բառից («կենակցում» իմաստով) տարանջատելու համար: Սեռահավասարությունը ներառում է սեռի բոլոր՝ այդ թվում նաև անդրսեռային դրսևորումները:

Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ այս բառացանկը որևէ կերպ չի անտեսում «գենդեր» եզրույթի գոյությունը հայերենում, ինչպես նաև այն դժվարին ուղին, որ այս եզրույթն անցել է հետսովետական հայերեն լեզվամտածողության և այլ համարժեք իրականությունների մեջ՝ հաճախ դիվայնացվելով և ծառայեցվելով քաղաքական օրակարգերի: Հետսովետական շատ երկրներում «գենդեր» բառի ներդրումը եղել է վիճարկելի՝ պայմանավորված ոչ միայն լեզվական, այլև քաղաքական և գաղափարական խոչընդոտներով: Բազմաթիվ լեզվամշակութային միջավայրերում «գենդեր» եզրույթը դիտարկվել է որպես արևմտյան ազդեցության արդյունք՝ երբեմն շահարկվելով պահպանողական շրջանակների կողմից, ինչն էլ արգելակել է դրա լայն կիրառությունը: Այնուամենայնիվ, տարբեր գիտական շրջանակներում այն հաստատվել է, և նրա գործածությունը, ինչպես նաև դրա նկատմամբ վերաբերմունքը, շարունակում է զարգանալ:

Սույն բառացանկի շրջանակներում նախընտրելի է պահպանել հայերեն լեզվական հենքը, և այդ պատճառով, երբ հնարավոր է, օգտագործվել են հայերեն համարժեքները՝ առանց անտեսելու կամ ժխտելու միջազգային գիտական տերմինաբանության գոյությունը: Սեռ արմատով ձևավորված նորաբանությունները, ինչպիսիք են *սեռահավասարություն, սեռազգայունություն, սեռահենություն*, նպաստում են հայերեն գիտական լեզվի զարգացմանը, ինչպես նաև ապահովում են հասկանալի և կիրառելի բառապաշար հայախոս համայնքի ավելի լայն շրջանակներում՝ առանց ավելորդ օտարաբանությունների:

Բառացանկը ոչ միայն լեզվական ճշգրտության ապահովման գործիք է, այլև նպաստում է հայերենում սեռահավասարության

վերաբերյալ գիտական և քաղաքական խոսույթի խորացմանը: **Սեռահավասարությունը չի ենթադրում կանանց և տղամարդկանց նույնացում, այլ նշանակում է, որ կանայք, տղամարդիկ և սեռային տարբեր դրսևորումներ ունեցող անհատները, անկախ իրենց կենսաբանական կամ սոցիալական բնութագրիչներից, պետք է ունենան հավասար հնարավորություններ, իրավունքներ և ազատություններ:** Սեռահավասարությունը հայերենում չի բացառում սեռային ոչ մի արտահայտում: Սեռահավասարության հասկացությունն այս բառացանկում ներկայացվում է լեզվական տեսանկյունից, հաշվի առնելով, որ լեզուն կարող է ինչպես պահպանել, այնպես էլ մարտահրավեր նետել գոյություն ունեցող գենդերային ուժային կառուցվածքներին: Ուստի, այս բառացանկը նաև խրախուսում է գիտակցված մոտեցում լեզվին, որի միջոցով հնարավոր է վերաիմաստավորել հանրային խոսույթը և խթանել ավելի ներառական ու հավասարակշռված սոցիալական հարաբերություններ:

Եզրույթների թարգմանության սկզբունքները

Սույն բառացանկում եզրույթների հայերեն տարբերակների թարգմանության եղանակները կարելի է դասդասել հետևյալ սկզբունքների համաձայն.

1. Բառարանային տարաժամանակյա քննություն

Բառային միավորների նշանակած իմաստները փորձել ենք նախևառաջ գտնել հայերենում՝ հաճախ դիմելով գրաբարյան կամ ուղղակի հնացած ձևերին, որոնք դուրս են մղվել կիրառությունից: Այժմ դրանց փոխարեն գործածվում են փոխառություններ, որոնք հաճախ հայերենին պարտադրում են օտար գերիշխող լեզուների օրինաչափությունը: Նման դեպքերում վերարժևորվել են հնացած կամ քիչ կիրառվող բառեր՝ հնարավորություն ընձեռելով լեզվին վերականգնել իր ներքին ռեսուրսները: Այդ հնացած ձևերից են, օրինակ, **«նշավակում», «կրկնակ», «փոխասական», «խոտորում»** և այլն:

2. Առկա մասնագիտական խոսույթի քննություն

Բառացանկում զետեղվել են այն բառերը, որոնք արդեն շրջանառվում են ոլորտում և կենսունակ են գիտական, քաղաքական կամ իրավական խոսույթում: Նման եզրույթների համադրումը կարևոր է ինչպես միջազգային չափանիշների համատեքստում հայերենում դրանց օգտագործելիությունը ապահովելու, այնպես էլ համադրելիության սկզբունքը պահպանելու տեսանկյունից: Օրինակ՝ **«զոհարկում», «լուսանցքավորում», «տարօրինակ»** և այլն:

3. Նորաբանություններ

- Միջազգային խոսույթում լայնորեն տարածված բառերի համար ստեղծվել են նոր հայերեն թարգմանություններ, օրինակ՝ **«համընդգրկում», «փոխհատականություն», «գործորդություն», «արդարակշռություն», «վերակայություն»**:
- Բառացանկ են ներմուծվել նաև այլ գիտակարգերում ընդունված նորաբանություններ: Այսպիսի բառերը նախկինում լայն կիրառություն չեն ունեցել սեռահավասարության կամ գենդերային հետազոտությունների շրջանակներում, սակայն, լինելով արմատացած այլ գիտակարգերում, համապատասխանեցվել են այս ոլորտի պահանջներին: Օրինակ՝ **«արտակա», «ներակա», «հաշվեքննություն», «գերիշխանություն»** և այլն:
- **«Սեռ» արմատով բարդ բառեր:** Նմանատիպ նորաբանությունները տնտեսվար տարբերակներ են, որոնք կարող են կանխել լեզվական հնարավոր խճողությունները և ապահովել հստակ ու համահունչ հասկացություններ: Օրինակ՝ **«սեռահավասար», «սեռազգայուն», «սեռահատուկ», «սեռահեն»** և այլն:

Այս բառացանկը նպատակ ունի դառնալու գործնական ուղեցույց քաղաքականություն մշակողների, հետազոտողների, դասախոսների, ուսանողների, ինչպես նաև գենդերային հարցերով զբաղվող մասնագետների և իրավապաշտպանների համար: Այն ընդգրկում է բազմաբնույթ եզրույթներ, որոնցից յուրաքանչյուրի բացատրությունը հիմնված է միջազգային չափանիշների, գիտական աղբյուրների և իրավական փաստաթղթերի վրա: Վստահ ենք, որ այս բառացանկը կնպաստի սեռահավասարությանը վերաբերող հարցերի ավելի խոր ընկալմանը, լեզվական մշակույթի հարստացմանը և թեմայի շուրջ կառուցողական խոսույթի ձևավորմանը:

Access and control over resources

Ռեսուրսներին հասանելություն և դրանց տնօրինում

Այս գաղափարը բաղկացած է երեք հասկացություններից՝ ռեսուրս, հասանելություն և տնօրինում կամ տվյալ ռեսուրսը օգագործելու որոշումը կայացնելու ունակություն: Ռեսուրսը դիտարկվում է որպես որևէ միջոց կամ ապրանք, այդ թվում՝

ա. տնտեսական, օրինակ՝ կենցաղային եկամուտ կամ արտադրական միջոցներ, օրինակ՝ հողատարածք, գործիքներ, գույք, աշխատանք, վարկ և այլն,

բ. քաղաքական միջոցներ, օրինակ՝ ղեկավար դիրք զբաղեցնելու հնարավորություն, տեղեկատվության հասանելություն, կազմակերպչական ունակություններ և այլն,

գ. ժամանակ:

Հասանելությունը և տնօրինումը իմաստային առումով տարբեր են. հասանելությունը ենթադրում է հնարավորություն օգտվելու որոշակի ռեսուրսներից, այդ թվում՝ նյութական, ֆինանսական, մարդկային, սոցիալական կամ քաղաքական, իսկ ռեսուրսների տնօրինումը տվյալ ռեսուրսը օգտագործելու որոշում կայացնելու ունակություն է ենթադրում: Օրինակ՝ եթե կինը հողատարածք է տնօրինում, ապա նշանակում է, որ այդ կինը հասանելություն ունի տվյալ հողատարածքին (այսինքն՝ օգտագործում է այդ հողատարածքը), սեփականատերն է (նաև օրինական առումով), և կարող է որոշել՝ վաճառել, թե վարձակալության հանձնել այդ հողատարածքը: Ռեսուրսներին հասանելությունը և տնօրինումը կանանց զորացման և, հետևաբար, սեռահավասարության կարևորագույն նախադրյալներից են:

Տե՛ս՝ UN-INSTRAW, Glossary of Gender-related Terms and Concepts

Affirmative Action Հաստատական գործողություն

Հաստատական գործողությունը հատուկ քաղաքականություն կամ միջոցառումների շարք է, որը նպատակ ունի փոխհատուցելու պատմականորեն ձևավորված անհավասարությունները և ապահովելու տնտեսական, կրթական ու մասնագիտական հնարավորությունների հավասարություն այն խմբերի համար, որոնք ենթարկվել են խտրության: Այն սովորաբար ուղղված է կանանց, էթնիկ և ազգային փոքրամասնություններին, հաշմանդամություն ունեցող անձանց, սոցիալապես անապահով խմբերին և այլ անհատներին, որոնք խոչընդոտների են հանդիպել պատմական կամ համակարգային խտրության պատճառով:

Հաստատական գործողության դրսևորումներ կարող են համարվել՝

- կրթական ծրագրերում ներառականության ապահովում (օրինակ՝ հատուկ կրթաթոշակներ, քվոտաներ բարձրագույն ուսումնական հաստատություններում և կառավարման կամ օրենսդիր մարմիններում):
- աշխատաշուկայում հավասար հնարավորությունների ստեղծում (օրինակ՝ նվազ ներկայացված խմբերի համար աշխատատեղերի նախապատվություն),
- պետական և մասնավոր հատվածի քաղաքականությունների վերանայում, որպեսզի դրանք նպաստեն բազմազանությանը,
- տնտեսական աջակցություն և գործարար հնարավորությունների ընդլայնում այն խմբերի համար, որոնք նախկինում ունեցել են սահմանափակ հասանելություն ռեսուրսներին:

Չնայած հաստատական գործողությունը նպատակ ունի խթանելու հավասարությանը, այն երբեմն բախվում է քննադատության,

հիմնականում հետևյալ պատճառներով՝

- կեղծ «շրջադարձային խտրության» մեղադրանքներ, երբ որոշները պնդում են, որ այս քաղաքականությունը տալիս է «անարդար» առավելություններ:
- տեխնիկական ու իրավական խնդիրներ՝ կապված ծրագրերի մշակման և կիրառման հետ:

Հաստատական գործողությունը հասարակական արդարության հասնելու միջոց է, որը ոչ թե սահմանափակում է այլ խմբերի հնարավորությունները, այլ փորձում է վերացնել պատմական անհավասարության հետևանքները: Այն նպաստում է բազմազան և ներառական հասարակության ձևավորմանը, որտեղ անհատները ստանում են հավասար հնարավորություններ՝ անկախ իրենց ծագումից, սեռից կամ սոցիալական կարգավիճակից:

Androcentrism Արակենտրոնություն

Արակենտրոնությունը հասարակական, մշակութային, գիտական և քաղաքական համակարգերի կառուցվածքային խոտորում է, որտեղ արական սեռը դիտարկվում է որպես նորմ, չափորոշիչ և հանրային կյանքի հիմնական առանցք, մինչդեռ իգական սեռը համարվում է երկրորդական, լրացում կամ կախյալ:

Այս մոտեցումը դրսևորվում է տարբեր մակարդակներում՝

- լեզվական դաշտում՝ երբ տղամարդկայինը ընկալվում և ներկայացվում է որպես դրական, իսկ կանացին կամ իգականը՝ որպես բացասական (օրինակ՝ «տղամարդ կին» արտահայտությունը համարվում է հաճոյախոսություն, մինչդեռ տղամարդուն «կին» անվանելը՝ վիրավորանք, կամ «տղավարի» մի բան ասելը որոշ շերտերի համար նշանակում է ազնիվ խոսք տալ:
- գիտական և պատմագրական հետազոտություններում՝ երբ տղամարդկանց փորձառությունը ներկայացվում է որպես համընդհանուր, մինչդեռ կանանց փորձառությունը լուսանցքավորվում է կամ ընդհանրապես չիի ներկայացվում,
- օրենսդրության և քաղաքականության մեջ՝ երբ կանանց խնդիրները դիտարկվում են որպես մասնավոր ոլորտի մաս, մինչդեռ տղամարդկային փորձը համարվում է հանրային և կարևոր:
- բժշկագիտության և հոգեբանության մեջ՝ երբ տղամարդկանց մարմնի բնութագրերը վերցվում են որպես չափորոշչային, իսկ կանանց առանձնահատկությունները դիտարկվում են որպես «շեղում» կամ «արտասովորություն»:

Արակենտրոնության հետևանքները կարող են ներառել հետևյալը՝

- կանանց և այլ ոչ արական ինքնությունների փորձառությունների անտեսում:
- սեռային անհավասարության վերարտադրություն հասարակության բոլոր ոլորտներում:
- նահապետական համակարգերի ամրապնդում:
- տղամարդկային տեսանկյունից մշակված քաղաքականությունների գերակայություն:
- աշխատանքի, կրթության և առողջապահության ոլորտներում կանանց նկատմամբ խտրության խորացում:

Արակենտրոնության հաղթահարման ուղիները կարող են ներառել՝

- գիտության, պատմագրության և մշակութային հետազոտությունների վերաիմաստավորում և վերանայում:
- կանանց և ոչ արական ինքնությունների փորձառությունների ընդգրկում քաղաքական, իրավական և կրթական ոլորտներում:
- մեդիա դաշտի վերանայում, որպեսզի այն արտացոլի բոլոր սեռերի և սեռային ինքնությունների մասնակցությունը հասարակական կյանքին և որ ամենակարևորն է չամրապնդի անհավասարությունը խտրական պատումներով, կարծրատիպային պատկերներով և ատելության ու բռնության քարոզով:
- սեռահավասարության ապահովում առողջապահական, սոցիալական և տնտեսական քաղաքականություններում:

Արակենտրոնության հաղթահարումը կարևոր քայլ է սեռահավասար և արդարակշիռ հասարակության կառուցման և սեռային կողմնակալության վերացման համար:

Androgyny Արվէգություն

Արվէգությունը վերաբերում է այնպիսի սեռային արտահայտությանը կամ ինքնությանը, որը միավորում է թե՛ ավանդականորեն առնական համարվող, թե՛ կանացի հատկանիշներ կամ չի տեղավորվում կրկնակ կամ երկբևեռ («տղամարդ/կին») համակարգում: Այն կարող է արտահայտվել ինչպես արտաքին տեսքի, վարքի, սոցիալական դերերի, այնպես էլ հոգեբանական ինքնության և ինքնընկալման մեջ:

Արվէգությունը կարող է դրսևորվել՝

- մարմնի և ոճի մակարդակում՝ երբ անհատի հագուստը, արտաքին տեսքը կամ շարժուձևը չեն համապատասխանում միայն առնական կամ միայն կանացի համարվող ձևերին և կաղապարներին: Ընդ որում հարկ է նշել, որ այս կաղապարները և ձևերը փոփոխական են նույնիսկ մեկ հասարակության մեջ՝ կախված ժամանակից և հանգամանքներից:
- Հոգեբանական մակարդակում՝ երբ անձն իր մեջ միավորում է և՛ ավանդականորեն առնական, և՛ կանացի համարվող հատկանիշներ (օրինակ՝ ինքնավստահություն և մեղմություն, իշխանություն և խնամք),
- Սոցիալական դերերի մակարդակում՝ երբ անհատը չի սահմանափակվում իր սեռին վերագրվող դերերով և ազատորեն ընտրում է իր արտահայտման ձևերը:

Տարբեր հասարակություններում և ժամանակաշրջաններում արվէգությունը տարբեր կերպ է ընկալվել: Որոշ մշակույթներում այն համարվել է դրական՝ խելամտության, հավասարակշռվածության կամ հոգևոր ամբողջականության նշան, մինչդեռ այլ հասարակություններում այն դիտարկվել է

որպես շեղում և հանդիպել է դիմադրության, քանի որ խաթարում է ավանդական սեռային դերաբաշխումը:

Արվէգությունը կարևոր տեղ ունի տարօրինակության /քվիր/ տեսության, ֆեմինիզմի և գենդերային ուսումնասիրությունների մեջ, քանի որ այն վիճարկում է կրկնակ սեռային համակարգը և առաջարկում ավելի ճկուն, բազմազան և անհատի ինքնությանն ավելի համապատասխանող մոտեցումներ: Ժամանակակից հասարակություններում արվէգությունը դառնում է ավելի ընդունված, հատկապես արվեստի, նորաձևության, մեդիայի և ակտիվիզմի ոլորտներում, որտեղ այն համարվում է սեռային և սեռական ազատության արտահայտություն:

Autonomy Ինքնավարություն

Ինքնավարության գաղափարը նշանակում է անհատի ունակությունը սեփական կյանքի վերաբերյալ ազատ և իրազեկ որոշումներ կայացնելը, որը թույլ է տալիս անհատին լինելու և գործելու սեփական ձգտումներին և ցանկություններին ներդաշնակ, եթե պատմական համատեքստը այն հնարավոր է դարձնում: Կանանց ինքնավարությունը սովորաբար ընկալվում է ըստ հետևյալ երեք տեսակի՝

ա. ֆիզիկական ինքնավարություն,

որը ենթադրում է կնոջ՝ սեփական սեռականության, վերարտադրության և կյանքի կազմակերպման իրավունքի ազատ և առանց բռնության իրացումը,

բ. տնտեսական ինքնավարություն,

որը ենթադրում է սեփական աշխատանք և եկամուտ ունենալու իրավունքը, ինչպես նաև վճարվող և անվարձահատույց աշխատանքի բաշխումը կանանց և տղամարդկանց միջև,

գ. որոշման ինքնավարություն,

որը ենթադրում է կանանց մասնակցությունը կառավարման բոլոր օղակներում, Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կամընտրական կոնվենցիայի ընդունումը և կանանց առաջխաղացման ազգային գործիքների ներդնումը:

Տե՛ս՝ Gender Equality Observatory for Latin America and the Caribbean (ECLAC). Annual report 2011. Women's autonomy: From the margins to the mainstream.

Beijing Platform for Action (BFA)

Պեկինի գործողությունների ծրագիր (ՊԳԾ)

Կամ Գործելու պեկինյան հարթակը առանցքային նշանակության փաստաթուղթ է, որը մշակվել է Պեկինում 1995 թվականին անցկացված Կանանց չորրորդ համաշխարհային համաժողովի արդյունքում: Անդամ պետությունները և համաշխարհային քաղաքացիական հասարակությունը ներկայացնող մեծ թվով կանայք և տղամարդիկ երկխոսության միջոցով ի մի բերեցին առկա ձեռքբերումները և նախանշեցին նոր պահանջներ, որոնք կարագացնեն սեռահավասարության համաշխարհային երթը և կանանց զորացումը: Այս փոխհամաձայնությունը զետեղվեց Պեկինի հռչակագրում և գործողությունների ծրագրում: Հռչակագիրը ներկայացնում է միջազգային համայնքի հանձնառությունը կանանց առաջխաղացման և գործողությունների ծրագրի հարցում՝ ապահովելով գենդերային հայեցակետի արտացոլումը ազգային, տարածաշրջանային և միջազգային քաղաքականության և ծրագրերի բոլոր մակարդակներում: Գործողությունների հարթակը ազգային և միջազգային գործողությունների ծրագրի համար միջոցներ է սահմանում կանանց զորացման տեսանկյունից ճգնաժամային ոլորտներում հաջորդող հինգ տարվա կտրվածքով մինչև 2000 թիվը:

Տե՛ս՝ UN Women, The United Nations Fourth World Conference on Women.

Binary Կրկնակ, երկբևեռ, բինար

Կրկնակ կամ երկբևեռ համակարգը սոցիալական, մշակութային և լեզվական կառուցակարգ է, որը իրականությունը դասակարգում է երկու փոխադարձ բացառող կարգերի մեջ: Սեռային կրկնակությունը հիմնված է այն համոզմունքի վրա, որ մարդիկ կարող են լինել միայն տղամարդ կամ կին, իսկ այս երկու կարգերը համարվում են բնական, մշտական և հակադիր: Այս համակարգն անտեսում է միջսեռական, ոչ բինար և տարօրինակ սեռայինի ինքնությունների գոյությունը, ինչպես նաև այն փաստը, որ գենդերը մշակութային և սոցիալական կառույց է, որը տարբեր հասարակություններում տարբեր կերպ է ընկալվում:

Non binary անկրկնակ, ոչ բինար

Անկրկնակ ինքնությունը սեռային ինքնություն է, որը չի տեղավորվում կրկնակ կամ երկբևեռ («տղամարդ/կին») համակարգում: Անկրկնակ մարդիկ կարող են նույնանալ որպես սեռային ծիրում փոփոխական, առնական ու կանացի համարվող հատկանիշները միավորող, որևէ սեռի չպատկանող կամ այլաձև ինքնություն ունեցող անձինք: Անկրկնակ ինքնությունը կարող է արտահայտվել անձնական ընկալման, արտաքին տեսքի, լեզվական օգտագործման (հատկապես դերանվանական սեռ ունեցող լեզվակիրների դեպքում) կամ սոցիալական դերի ընտրության մեջ: Այն ընդգրկում է տարբեր սեռային ինքնություններ, ինչպիսիք են արվէգ (անդրոգեն), հեղհեղուկ, անսեռ (ագենդեր) և այլ տարբերակներ:

Bullying Նշավակում

Հետևողականորեն սպառնալից, ֆիզիկապես ագրեսիվ կամ բանավոր վիրավորական վարքագիծ՝ ուղղված այլ մարդկանց, հատկապես ավելի երիտասարդ, ավելի փոքր, թույլ կամ հարաբերականորեն անբարենպաստ իրավիճակում գտնվող անհատերին կամ անհատների խմբին: Նշավակումը սովորաբար ենթադրում է կրկնվող վարքագիծ, որը նպատակ ունի կա՛մ ֆիզիկական, կա՛մ հուզական վնաս հասցնելու անհատին կամ խմբին և ներառում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են սպառնալը, ծաղրելը, վախեցնելը, նախատելը, մականվանելը:

Verbal bullying բանավոր նշավակում

Բանավոր նշավակումը նշավակման առաջին փուլն է և նշանակում է խոսքի, ձայնի կամ հարալեզվական միջոցների կիրառմամբ դիմացինին նվաստացնելը: Բանավոր նշավակումը ներառում է մականվանում, հայհոյախոսություն, եղծաբանություն, վարկաբեկում, սպառնալիք, բղավում, փնովում կամ կոպիտ հնչերանգով խոսք և նախատինք, ծաղր և անհատի որևէ առանձնահատկության ծաղրական նմանակում՝ տնազ:

Sexual bullying Սեռական նշավակում

Նշավակման տեսակ, որը պայմանավորված է անհատի սեռով, սեռականությամբ կամ սեռական ուղղությամբ և իրականացվում է տարբեր միջավայրերում՝ այդ թվում առցանց, աշխատավայրում, կրթական հաստատություններում և հանրային փոխադրամիջոցներում: Սեռական նշավակումը սեռական ոտնձգություն է և կարող է դրսևորվել հետևյալ գործողություններով՝

- անհատի մասին սեռաբնույթ տեղեկատվության տարածում կամ վարկաբեկում,
- սեռաբնույթ արտահայտությունների, բառերի, ոչ լեզվական միջոցների կիրառումը և ուղղումը նշավակման թիրախին,
- սեռաբնույթ շարժումների կամ ակնարկների ուղղորդում,
- անհամահավան ֆիզիկական կապ կամ հպում,
- սեռաբնույթ տեսագրությունների և նկարների առցանց և առկա տարածում:

Commission on the Status of Women (CSW)

Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողով

ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի գործառութային հանձնաժողովներից մեկն է: Հիմնադրված լինելով 1946 թվականին՝ այս հանձնաժողովը բացառապես նվիրված է սեռահավասարությանն ու կանանց կարգավիճակի բարելավմանը: Որպես քաղաքականություն մշակող հիմնական մարմին ամբողջ աշխարհում՝ հանձնաժողովը հանդիպում է ամեն տարի՝ գնահատելու սեռահավասարության ոլորտում առաջընթացը, վերհանելու խնդիրները, սահմանելու չափանիշներ և մշակելու սեռահավասարությանն ու կանանց համաշխարհային առաջխաղացմանը միտված քաղաքականություն:

Տե՛ս՝ UN Women, Commission on the Status of Women

Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women (CEDAW)

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին **կոնվենցիան** ընդունվել է 1979 թ-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից և համարվում է կանանց իրավունքների միջազգային օրինագիծ: CEDAW-ն ներկայացնում է սեռով պայմանավորված խտրության ձևերի բնույթն ու նշանակությունը, ինչպես նաև նախանշում մասնակից պետությունների պարտավորությունները վերացնելու խտրությունը և հասնելու նշանակալի հավասարության: Կոնվենցիան քննում է ոչ միայն օրենքները, այլ նաև մշակութային և ավանդահեն խտրական պրակտիկաները և կիրառելի է ոչ միայն պետահիրավական գործունեության պարագայում, այլ նաև մասնակից պետության պարտավորությանը՝ անդրադառնալու մասնավոր սեկտորում կանանց նկատմամբ խտրության դրսևորումներին ևս: Այն ընդարձակ փաստաթուղթ է, որը ներառում է կանանց նկատմամբ խտրության տարատեսակ դրսևումները, կանանց քաղաքացիական, քաղաքական, սոցիալ-մշակութային և տնտեսական իրավունքները:

Տե՛ս՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա

Decent work Արժանապատիվ աշխատանքը

Արժանապատիվ աշխատանքը ազատ, արդար, անվտանգ և արժանապատիվ աշխատանքի հասանելիությունն է: Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ արժանապատիվ աշխատանքը ենթադրում է արդյունավետ աշխատանքի հնարավորություն, որն անհատին կարող է տալ արդար եկամուտ (կատարված աշխատանքին համապատասխան), աշխատավայրում անվտանգություն և ապահովություն, սոցիալական պաշտպանություն նրանց ընտանիքներին, անձնական զարգացման և սոցիալական ինտեգրման բարենպաստ հեռանկարներ, անհանգստությունները արտահայտելու վստահություն, մասնակցություն իրենց կյանքի համար նշանակալից որոշումների կայացմանը, ինչպես նաև կանանց և տղամարդկանց հնարավորությունների ու վերաբերմունքի հավասարություն:

Տե՛ս՝ ILO Decent work; United Nations Economic and Social Council (2006) The right to Work, General comment No. 18.

Decision-making and participation

Որոշումների կայացում և մասնակցություն

Հանրային կյանքում՝ հատկապես հանրային որոշումների կայացման ոլորտում կանանց մասնակցությունը կանանց զորացման և սեռահավասարության հիմնական միջոցներից և ռազմավարություններից է: Հատկանշական է, որ որոշումների կայացումը վերաբերում է հանրային կյանքի տարբեր ոլորտներին, որոնք ներառում, բայց չեն սահմանափակվում կառավարության, օրենսդրական և քաղաքական մարմիններում որոշումների կայացմամբ: Անհրաժեշտ է նաև վճռորոշ պաշտոններում սեռահավասար ներկայացվածության հասնել արվեստի, մշակույթի, սպորտի, մեդիայի, կրթության, կրոնի, իրավական ոլորտներում, ինչպես նաև գործատուների և արհեստակցական միություններում, անդրազգային և ազգային ընկերություններում, բանկային, ակադեմիական և գիտահետազոտական հաստատություններում, ինչպես նաև տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններում, այդ թվում նաև ՄԱԿ-ի համակարգում:

Տե՛ս՝ Beijing Platform for Action. Chapter IV. G. Women in power and decision-making.

Declaration on the Elimination of Violence against Women

Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիր

Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիրը ընդունվել է 1993 թ-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից և, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային կից՝ միտված է կանանց դեմ բռնության վերացմանը: Հռչակագիրը սահմանում է կանանց նկատմամբ բռնությունը որպես սեռով պայմանավորված բռնության յուրաքանչյուր դրսևորում, որը հանգեցնում է կամ հնարավոր է՝ հանգեցնի կանանց՝ սեռական, ֆիզիկական կամ հոգեբանական վնասի կամ տառապանքի՝ ներառյալ վերոնշյալ գործողությունների սպառնալիքները, հարկադրանքը կամ հանրային և մասնավոր կյանքում ազատությունից կամայական զրկումը: Հռչակագիրը հստակեցնում է, որ կանանց նկատմամբ բռնության դրսևորումները ներառում են, բայց չեն սահմանափակվում ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությամբ, որը տեղի է ունենում ընտանիքում կամ հասարակության մեջ ընդհանուր առմամբ և իրականացվում կամ խրախուսվում է պետության կողմից: Հռչակագիրը նաև շեշտում է, որ պետությունները պետք է դատապարտեն կանանց նկատմամբ բռնությունը և չվկայակոչեն որևէ ավանդույթ, սովորույթ կամ կրոնական համոզմունք բռնության վերացմանն ուղղված պարտավորություններից խուսափելու համար:

Տե՛ս՝ Declaration on the Elimination of Violence against Women

Discrimination against girls and women

Աղջիկների և կանանց դեմ խտրությունը

Աղջիկների և կանանց խտրությունը աղջիկների և կանանց նկատմամբ ուղղակի կամ անուղղակի տարբերակված վերաբերմունքն է տղաներից կամ տղամարդկանցից, որը խոչընդոտում է նրանց օգտվել իրենց ազատություններից և իրավունքներից: Խտրությունը կարող է լինել ուղղակի կամ անուղղակի: Ուղղակի խտրությունը տարբերակված վերաբերմունքի ավելի ակնհայտ տեսակն է: Օրինակ՝ որոշ երկրներում կանայք օրենքով չեն կարող սեփականություն ունենալ կամ օրենքով չեն կարող գործունեություն ծավալել որոշ ոլորտներում, կամ համայնքի կենսակերպը կամ ավանդույթները թույլ չեն տալիս, որ կանայք կամ աղջիկները բարձրագույն կրթություն ստանան: Անուղղակի խտրությունը ավելի դժվար է նկատել և դրսևորվում է թվացյալ անկողմնակալ իրավիճակներում, որոնք իրականում հանգեցնում են աղջիկների և կանանց նկատմամբ անհավասար վերաբերմունքի: Օրինակ՝ ոստիկանի աշխատանքի համար կարող են լինել հասակի և քաշի պահանջներ, որոնց կանայք կդժվարանան համապատասխանել:

Տե՛ս՝ UNICEF (2011) Convention on the Elimination of all forms of Discrimination against Women: In Brief for Adolescents.

Empowerment of women and girls

Կանանց և աղջիկների զորացում

Կանանց և աղջիկների զորացումը ենթադրում է սեփական կյանքի տնօրինման ուժի ձեռքբերումը: Այն ներառում է իրազեկում, ինքնավստահության բարձրացում, ընտրության հնարավորությունների ավելացում, ռեսուրսներին հասանելության և տնօրինման բարձրացում, ինչպես նաև սեռային խտրություն և անհավասարություն ամրապնդող և վերարտադրող կառույցների ու հաստատությունների վերափոխում: Կանանց և աղջիկների զորացումը ենթադրում է ոչ միայն հավասար հնարավորություններ կրթության, առողջապահության, սեփականության, զբաղվածության և այլ հարցերում, այլ նաև գործողություն օգտվելու այդ իրավունքներից, ունակություններից, հնարավորություններից և ռեսուրսներից վճռական ընտրություն կամ որոշումներ կայացնելու նպատակով:

Տե՛ս՝ UNICEF, UNFPA, UNDP, UN Women. "Gender Equality, UN Coherence and You"; Office of the Special Adviser on Gender Issues and the Advancement of Women (now part of UN Women) (2001) "Important Concepts Underlying Gender Mainstreaming"; UNESCO GENIA Toolkit for Promoting Gender Equality in Education

Feminization of poverty Աղքատության կանացիացում

Աղքատության հանգեցնող երևույթները տղամարդկանց և կանանց տարբեր կերպ են ազդում, որի արդյունքում աղքատության մեջ հայտնված կանանց թիվը զգալիորեն գերազանցում է տղամարդկանց թիվը: Աղքատությունից կանայք ավելի խիստ են տուժում, քան տղամարդիկ, և կանանց աղքատության միտումը գնալով աճում է՝ հիմնականում պայմանավորված լինելով կանանց կողմից գլխավորած ընտանիքների քանակի ավելացմամբ: Աղքատությանը հանգեցնող այս երևույթները ընդհանուր եզրույթով ներկայացվում են որպես աղքատության կանացիացում:

Չնայած նրան, որ աղքատության կանացիացումը վիճարկելի երևույթ է՝ այն վերհանել է կարիքը հասկանալու, որ կանայք և տղամարդիկ տարբեր կերպ են տուժում աղքատությունից և սեռը աղքատության պարագայում զգալի գործոն է, ինչպես և տարիքը, էթնիկ պատկանելությունը, աշխարհագրական տեղակայումը, ի թիվս այլ հանգամանքների, որոնք ազդում են ազքատությանը և բարձրացնում կանանց խոցելիությունը:

Տե՛ս՝ United Nations Economic Commission of Latin America (ECLAC). 2004. Understanding poverty from a gender perspective. Women and Development Unit. Santiago, Chile.

Gender Սեռ, գենդեր

Կենսաբանական սեռին վերագրված դերային, նորմերի, պատկերացումների և վարքագծային պայմանական ակնկալիքները կոչվում են գենդեր: Այն որպես եզրույթ ներմուծվել է գիտական խոսույթ տարանջատելու սեռի կենսաբանական և հանրաբանական ընկալումները: Գենդերի գաղափարը որպես սեռի հանրաբանական ընկալում տասնամյակներ շարունակ ենթարկվել է բուռն քննարկումների և այժմ փաստարկվում է որպես ուղղակի սեռ, որովհետև սեռի մասին պատկերացումները ինքնին սոցիալ մշակութային են և ոչ կենսաբանական: Այս պատկերացումները փոփոխական են ըստ ժամանակի և տարածության:

Հայաստանյան և հետսովետական համատեքստերում, գենդեր բառը շահարկվել է քաղաքական նպատակներով՝ ներկայացվելով որպես արևմտյան գաղափար և հանգեցրել հանրության շրջանում թյուրընկալման, թեպետ գենդերատյացությունը որպես սեռային գերիշխող աստիճանակարգերի խախտման նկատմամբ հակակրանք տարածված է նաև արևմտյան պահպանողական և հետադիմական շրջանակներում:

Gender (or sexual) division of labor

Աշխատանքի բաժանումն ըստ սեռի

Աշխատանքի բաժանումն ըստ սեռի նշանակում է այն, թե ինչպես է յուրաքանչյուր հասարակություն աշխատանքը բաշխում կանանց ու տղամարդկանց կամ աղջիկների ու տղաների միջև՝ արժևորելով և զատորոշելով աշխատանքը ըստ սեռային հատկանիշի: Աշխատանքի բաժանման մեջ առանձնանում են հետևյալ դերերը՝

ա. արտադրական դերեր (production roles),

որոնք իրականացվում են կանանց և տղամարդկանց կողմից սեփական և ընտանեկան կարիքները հոգալու նպատակով վաճառքի կամ փոխանակման ենթակա որևէ ապրանք կամ ծառայություն արտադրելու համար:

բ. վերարտադրական դերերը (reproductive roles)

գործողություններ են, որոնք անհրաժեշտ են հասարակության աշխատուժի վերարտադրության ապահովման համար և ներառում են երեխաներ ունենալն ու դաստիարակությունը, ընտանիքի խնամատարությունը, ինչպես նաև տնային աշխատանքի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են, օրինակ՝ մաքրումը, սննդի պատրաստումը:

գ. համայնքային տնտեսվարման դերը (community managing role)

իրացվում է հիմնականում կանանց կողմից համայնքային մակարդակում որպես իրենց վերարտադրական դերի շարունակություն: Կանայք շատ հաճախ ստանձնում են համայնքային անվարձահատույց դերեր՝ ապահովելու հավաքական սպառման համար նախատեսված սակավ ռեսուրսների ձեռքբերումը և տնօրինումը՝ լինի դա ջրի մատակարարում, առողջապահություն, թե կրթություն: Սա կամավոր անվարձահատույց աշխատանք է և իրականացվում է այսպես կոչված ազատ ժամանակ:

դ. համայնքային քաղաքական դերերը (community politics role)

ստանձնում են սովորաբար տղամարդիկ համայնքային մակարդակում հաճախ պետական քաղաքականության շրջանակում: Պաշտոնապես հաստատված այս ղեկավար դերերը կամ ուղղակի վարձատրվում են, կամ էլ հանգեցնում են իշխանության և կարգավիճակի բարձրացման:

ե. եռակի դերը (triple role)

վերաբերում է կանանց ավելի երկարաժամ և մասնատված օրական աշխատանքին, քանի որ սովորաբար կանայք ներգրավված են երեք հիմնական դերում՝ վերարտադրական, արտադրական և համայնքային:

Gender advisor

Սեռային կամ գենդերային հարցերով խորհրդատու

Սեռային կամ գենդերային հարցերով խորհրդատուն խթանում և աջակցում է յուրաքանչյուր առաքելության, թիմի, աշխատակազմի կամ կազմակերպության մեջ քաղաքականության և ծրագրային աշխատանքում սեռազգայուն մոտեցումներին: Սեռային հարցերով խորհրդատուն ռազմավարական խորհրդատվություն է տրամադրում նախագծման և քաղաքականության մշակման գործընթացներում, կազմակերպչական հանդիպումներին, աշխատանքային ժողովներին: Սովորաբար սեռային հարցերով խորհրդատուների իրավասության տիրույթում են նաև շահապաշտպան և իրազեկման աշխատանքները, վերապատրաստման և կարողությունների զարգացման դասընթացները, գնահատման, հաշվետվության, մշտադիտարկման և տեխնիկական աջակցման ծառայությունները: Այս աշխատանքը չի սահմանափակվում տվյալ կազմակերպությամբ, բայց նաև կապեր է հաստատում ազգային և տարածաշրջանային գործընկերների հետ սեռային խնդիրներին հավուր պատշաճի անդրադառնալու նպատակով:

Gender analysis

Սեռային կամ գենդերային վերլուծություն

Սեռային վերլուծությունը քննում է սեռային դերերի, գործունեության, կարիքների, հնարավորությունների, արտոնությունների և իրավունքների տարբերության ազդեցությունը կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների վրա որոշակի իրավիճակում կամ համատեքստում: Գենդերային վերլուծությամբ ուսումնասիրվում և վերհանվում են կանանց և տղամարդկանց փոխհարաբերությունները, դրանցում հարաբերական սահմանափակումները, ինչպես նաև ռեսուրսներին հասանելությունը և դրանց տնօրինումը: Անհրաժեշտ է ընդգրկել գենդերային վերլուծությունը իրավիճակային գնահատման կամ վերլուծության բոլոր մակարդակներում կանխելու սեռահատուկ անարդարության և անհավասարության դրսևորումները և դրանց վատթարացումը տարատեսակ միջամտությունների արդյունքում:

Տե՛ս՝ UNICEF, UNFPA, UNDP, UN Women. "Gender Equality, UN Coherence and You".

Gender audit

Սեռային կամ գենդերային հաշվեքննություն

Սեռային կամ գենդերային հաշվեքննությունը մասնակցային մեթոդաբանության վրա հիմնված գործիք և գործընթաց է, որը միտված է խթանելու որևէ կազմակերպության պատրաստվածությունը գործնականում ավելի արդյունավետ կերպով համընդգրկելու գենդերային հայեցակետը անհատի, կազմակերպության ենթաբաժնի կամ ընդհանուր հաստատութենական մակարդակում: Սեռային հաշվեքննությունն այս առումով ավելի հարում է սոցիալական հաշվեքննությանը, որը որակական հաշվեքննության տեսակ է և տարբերվում է ավելի ավանդական ֆինանսական հաշվեքննությունից: Սեռային հաշվեքննության միջոցով կարելի է պարզել, թե արդյոք տվյալ կազմակերպության մեջ գենդերային համընդգրկմանն ուղղված ներքին գործընթացները և աջակցման համակարգերը արդյունավետ են, փոխներգործուն կամ արդյոք դրանք գործում են ընդհանուր առմամբ:

Սեռային հաշվեքննությունը բացահայտում է առկա բացերն ու խնդիրները և առաջարկություններ տրամադրում հնարավոր բարելավման և նորարարության առումով: Այն նաև արձանագրում է սեռահավասարությանն ուղղված արդեն հաջողված ջանքերը, փորձը և ձեռքբերումները: Սեռային հաշվեքննության արդյունավետ իրականացումը կարող է օգնել յուրաքանչյուր կազմակերպությանը գործադրելու իր ամբողջ ներուժը և արդյունավետությունը:

Տե՛ս՝ ILO (2008) ILO Participatory Gender Audit: A tool for organizational change. Geneva.

Gender Blindness Սեռի անտեսում

Սեռային հատկանիշի անտեսումը (բառացի՝ գենդերային կուրությունը) ընկալման բացակայությունն է, որ կանանց/աղջիկների և տղամարդկանց/տղաների դերերն ու պարտականությունները վերագրված են կամ պարտադրված են նրանց հատուկ սոցիալական, մշակութային, տնտեսական և քաղաքական համատեքստերում: Գենդերային առումով անտեսողական նախագծերը, ծրագրերը, քաղաքականությունները և վերաբերմունքը հաշվի չեն առնում այս տարբեր դերերն ու կարիքները: Դրանք, հետևաբար, պահպանում են ստատուս քվոն և չեն կարող որևէ կերպ նպաստել սեռային հարաբերությունների անհավասար կառուցվածքի վերափոխմանը:

Տե՛ս՝ UNICEF, UNFPA, UNDP, UN Women. "Gender Equality, UN Coherence and You".

Discrimination Խտրություն

Սխալմամբ շրջանառվում է *խտրականություն* տարբերակը հիմնական փաստաթղթերի պաշտոնական թարգմանություններում: *Խտրելու* անվանական տարբերակը *խտրությունն* է, իսկ *խտրական* լինելունը՝ *խտրականությունը*: Այսինքն՝ վերջինս *խտրական* լինելու վիճակն է ցույց տալիս և ոչ թե գործողությունը: Բացի նրանից, որ իմաստային առումով սխալ է, այն նաև անտեղի հավելյալ հնչյունակապակցություն է ավելացնում և հետագա բառաբարդումը դարձնում անբարեհունչ և դժվարարտասանելի: Ավելին՝ խտրականություն տարբերակը խտրելու գործողությունը դարձնում է կրավորական և վիճակային, որը հակասում է բառիմաստին: Համեմատենք ազնվություն և ազնվականություն բառերը, որոնք ավելի տեսանելի են դարձնում ածականակերտ -ական վերջավորության իմաստային լիցքը:

Gender Discrimination

Սեռով պայմանավորված խտրություն

Գենդերային խտրությունը նշանակում է սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակելու կամ վերացնելու քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը:

Խտրությունը կարող է լինել դե յուրե ուղղակի կամ անուղղակի խտրություն: Դե յուրե ուղղակի խտրությունը կարող է, օրինակ, օրենքով սահմանափակումներ պարտադրել կանանց՝ իրենց կյանքը սեռահավասարության հիմնարար սկզբունքերի համաձայն տնօրինելու: Օրինակ՝ որոշ երկրներում կանայք, որոնք ամուսնանում են օտարերկրացիների հետ, կարող են կորցնել իրենց քաղաքացիությունը կամ սեփականության իրավունքը: Դե յուրե անուղղակի խտրության դրսևորում կարելի է համարել պետությունների պատրաստակամության բացակայությունը ընդունելու հակախտրական օրենքներ կամ նախաձառնելու քայլեր վերացնելու կամ մեղմելու սեռային անհավասարության օրինականացված կամ սոցիալ-մշակութային ձևերը՝ արդարացնելով այն հասարակության պատրաստ չլինելու, ավանդականության կամ այլ պատճառաբանությամբ: Փաստացի խտրությունը ենթադրում է սեռային խտրության ձևեր, որոնք չեն կանոնակարգվում որևէ իրավական համակարգով, բայց մեծ տարածում ունեն գործնականում հասարակության մեջ:

Տե՛ս՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա

Gender diversity Սեռաբազմազանություն

Սեռաբազմազանությունը եզրույթ է, որը նշանակում է ընկալում, որ անհատի ինքնարտահայտման դրսևորումները և նախասիրությունները կարող են տարբերվել սեռի վերաբերյալ տարածված ընկալումներից և նորմերից:

Տե՛ս՝ Gender Spectrum, Understanding Gender

Gender equality Սեռահավասարություն

Սեռահավասարությունը ենթադրում է կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների հավասար իրավունքներ, պարտականություններ և հնարավորություններ: Սեռահավասարությունը տղամարդկանց և կանանց նույնացումը չէ, այլ այն, որ կանանց և տղամարդկանց իրավունքները, պարտականությունները և հնարավորությունները չեն կարող պայմանավորված լինել իրենց կենսաբանական արականությամբ կամ իգականությամբ: Սեռահավասարության պայմաններում կանանց և տղամարդկանց հետաքրքրությունները, կարիքները և առաջնայնությունները հաշվի են առնվում կանանց և տղամարդկանց տարբեր խմբերի բազմազանության ընկալմամբ: Սեռահավասարությունը չի վերաբերում միայն կանանց. սեռահավասարության ջանքերին պետք է ամբողջությամբ ներգրավված լինեն տղամարդիկ նույնպես, քանի որ այն մարդու անքակտելի իրավունք է և մարդահեն կայուն զարգացման նախապայման ու ցուցանիշ:

Տե՛ս՝ UN Women, OSAGI Gender Mainstreaming - Concepts and definitions

Gender equity Սեռային արդարակշռություն

Սեռային արդարակշռությունը տղամարդկանց և կանանց նկատմամբ արդարակշիռ վերաբերմունքն է: Կանանց և տղամարդկանց միջև առկա պատմական և սոցիալական անհավասարության պայմաններում հավասար վերաբերմունքը երբեմն հաշվի չի կարող առնել սեռով պայմանավորված կարիքները և՛ տղամարդկանց, և՛ կանանց պարագայում: Սեռային առումով արդարակշիռ մոտեցումը կարող է վերհանել սեռով պայմանավորված առանձնահատուկ կարիքները և ավելի արդյունավետ կերպով խթանել սեռահավասարության ջանքերին: Օրինակ՝ աղջիկների և տղաների կրթական կարիքները և սահմանափակումները կարող են տարբերվել սեռային ակնկալիքների պատճառով. աղջիկներից շատ հաճախ ակնկալվում է վերարտադրական գործառույթի իրականացում, իսկ տղաների կրթական կամ զբաղվածության ազատությունները կարող են խաթարվել, օրինակ, պարտադիր զինծառայությամբ: Հետևաբար, հավասար հնարավորությունները չեն կարող համարվել հավասարազոր և արդարակշիռ՝ ելնելով անհատի առանձնահատուկ կարիքներից: Տե՛ս նաև ***փոխհատում***:

ՄԱԿ-ի համար ավելի նախընտրելի եզրույթ է հավասարությունը, որը նաև հաստատվել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 28-րդ Ընդհանուր հանձնարարականում. «Մասնակից պետությունները կոչված են օգտագործելու բացառապես կանանց և տղամարդկանց հավասարության կամ գենդերային հավասարության հասկացությունները և չօգտագործելու գենդերային արդարակշռության հայեցակարգը Կոնվենցիայով նախատեսված իրենց պարտավորությունների իրականացման համար: Վերջինս կիրառվում է որոշ իրավական համակարգերում՝ վերաբերելու կանանց և տղամարդկանց տարբերվող

կարիքներին համապատասխան արդարակշիռ վերաբերմունքին: Սա կարող է ներառել հավասար վերաբերմունք կամ վերաբերմունք, որը տարբեր է, բայց համարվում է համարժեք իրավունքների, շահերի, պարտավորությունների և հնարավորությունների առումով»:

Տե՛ս՝ UN Women, OSAGI Gender Mainstreaming - Concepts and definitions; Committee on the Elimination of Discrimination against Women (2010), General recommendation No. 28 on the core obligations of States parties under article 2 of the Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women

Gender focal point

Սեռային/Գենդերային հարցերով պատասխանատու

Գենդերային հարցերով պատասխանատուի հիմնական դերը տվյալ կազմակերպության գործունեության և գործավարության մեջ սեռահավասարության և կանանց զորացման գաղափարների նկատմամբ տվյալ կազմակերպության ուշադրության ուղղորդումն ու խթանումն է: Սովորաբար այս մասնագետները հանդես են գալիս որպես սեռահավասարության ջատագովներ և աջակցություն են տրամադրում կազմակերպությանը գենդերային հարցերի և սեռահավասարության հաջողված փորձի վերաբերյալ: Տարբեր երկրներում գենդերային հավասարության հարցերով պատասխաատուների դերը և հաստիքը, ինչպես նաև, առկայության պարագայում, այդ հաստիքի անվանումը տարբերվում են: Սովորաբար այս մասնագետների գործառույթների շրջանակը ներառում է կազմակերպության/գրասենյակի/ծրագրի գենդերային ինտեգրման ռազմավարության համակարգումը, գենդերային տեղեկատվության կամ սեռահավասարության վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը, գենդերային խնդիրների ներառման համար անհրաժեշտ տեխնիկական աջակցությունը, կազմակերպության ներսում սեռահավասարությանն ուղղված կարողությունների զարգացումը, գիտելիքի կառավարումը, ինչպես նաև միջգերատեսչական նախաձեռնությունների համակարգումն ի թիվս այլոց:

Տե՛ս՝ UN Women and ITC-ILO. 2013. Blended course for UN System Gender Focal Points.

Gender gap Սեռային կամ գենդերային անջրպետ

Սեռային անջրպետը (հայերենում երբեմն օգտագործվում է նաև «սեռային խզվածք» եզրույթը) վերաբերում է հասարակության մեջ կանանց և տղամարդկանց վիճակի կամ դիրքի միջև եղած ցանկացած անհավասարությանը: Այն հաճախ օգտագործվում է կանանց և տղամարդկանց միջև միջին վաստակի տարբերությունը նշանակելու համար, օրինակ՝ աշխատավարձի սեռային տարբերություն: Այնուամենայնիվ, գենդերային անջրպետ առկա է բազմաթիվ ոլորտներում, այդ թվում Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) չորս հիմնասյուն հանդիսացող ոլորտների՝ տնտեսական մասնակցության և հնարավորությունների, կրթության ձեռքբերման, առողջության և գոյատևման, ինչպես նաև քաղաքական զորացման ոլորտների, համաձայն որոնց ՀՏՖ-ն հաշվարկում է իր «Գենդերային անջրպետի ցուցանիշը»:

Տե՛ս՝ Hausmann, Ricardo, Laura D. Tyson, Saadia Zahidi, Editors (2012). "The Global Gender Gap Report 2012". World Economic Forum, Geneva, Switzerland.

Gender identity Սեռային կամ գենդերային ինքնություն

Սեռային ինքնությունը վերաբերում է անձի՝ սեռի նկատմամբ ներքին, խորքային և անհատական զգացողությանն ու փորձին, որոնք կարող են համապատասխանել կամ չհամապատասխանել մարդու ֆիզիոլոգիային կամ ի ծնե վերագրված սեռին: Սեռային ինքնությունը ենթադրում է մարմնի նկատմամբ սերտանձնական զգացողություն, որը կարող է ենթադրել, ազատ ընտրության առկայության պարագայում, բժշկական, վիրաբուժական կամ այլ միջոցներով մարմնի արտաքին տեսքի կամ գործառույթի փոփոխություն: Անհատի սեռային ինքնության տարբերությունները կարող են դրսևորվել կամ ընկալվել նաև այնպիսի այլ արտահայտչամիջոցներով, ինչպիսիք են, օրինակ, հագուստը, խոսքը և շարժուձևը:

Տե՛ս՝ UNFPA and Promundo (2010). Engaging Men and Boys in Gender Equality and Health. A Global toolkit for action; UNAIDS (2011). UNAIDS Terminology Guidelines.

Gender inequality index (GII)

Սեռային կամ գենդերային անհավասարության ցուցանիշ

Սեռային անհավասարության ցուցանիշը մշակվել է 2010 թվականին ՄԱԶԾ-ի կողմից՝ կանանց և տղամարդկանց միջև առկա սեռային անհավասարությունը չափելու համակցված գործիքակազմով: Այն ցույց է տալիս կանանց և տղամարդկանց ձեռքբերումների միջև անհավասարության հետևանքով առաջացած մարդկային զարգացական կորուստը երեք հարթության վրա.

- ա) վերարտադրողական առողջություն,
- բ) զորացում,
- գ) զբաղվածություն:

Տե՛ս՝ UNDP, Gender Inequality Index

Gender mainstreaming

Սեռային հատկանիշի համընդգրկում (մեյնսթրիմինգ)

Սեռային հատկանիշի մեյնսթրիմինգը գործընթաց է, որի միջոցով կանանց և տղամարդկանց շահերը դառնում են քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի այլ ոլորտներում իրավական ակտերի, ռազմավարության, ծրագրերի և միջոցառումների մշակման, կատարման, մշտադիտարկման և գնահատման գործընթացի անքակտելի բաղադրիչը, որն ուղղված է կանանց և տղամարդկանց միջև անհավասարության վերացմանը:

Սեռային հատկանիշի համընդգրկումը ՄԱԿ-ի և միջազգային համայնքի կողմից ընդունված մոտեցում է, որը միտված է կանանց և աղջիկների իրավունքների առաջընթացին՝ դիտարկելով դրանք որպես մարդու իրավունքների կարևոր բաղադրիչ: Այն ինքնանպատակ գործընթաց չէ, այլ սեռահավասարության ուղղությամբ առաջընթաց գրանցելու ռազմավարություն:

Սեռային հատկանիշը որևէ կազմակերպության մեջ համընդգրկել նշանակում է գնահատել ցանկացած գործընթացի՝ օրենսդրության, քաղաքականության և ծրագրերի բոլոր հարթություններում, ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա առանձին: Այն նաև միջոց է՝ ներառելու կանանց և տղամարդկանց սեռահատուկ կարիքներն ու փորձառությունները քաղաքականության և ծրագրային մշակման, իրականացման, վերահսկման և գնահատման բոլոր մակարդակներում՝ ապահովելով նրանց հավասար հնարավորությունները:

Գենդերային համընդգրկման նպատակն է հասնել սեռահավասարության և նվազեցնել այն կառուցակարգերը, որոնք վերարտադրում են սեռային անհավասարություն և անարդարություն: Այն կարևոր միջոց է հասարակական, քաղաքական և տնտեսական դաշտում համահավասարության խթանման համար՝ նպաստելով ավելի ներառական և արդար սոցիալական հարաբերությունների ձևավորմանը:

Տե՛ս՝ UNICEF, UNFPA, UNDP, UN Women. "Gender Equality, UN Coherence and You", ECOSOC agreed conclusions 1997/2

Gender norms Սեռային կամ գենդերային նորմեր

Սեռային կամ գենդերային նորմերը գաղափարներ են, թե ինչպես պետք է լինեն և վարվեն տղամարդիկ և կանայք: Կյանքի վաղ շրջանում յուրացված և սովորած այս «կանոնները» հիմք են հանդիսանում անհատի սեռային սոցիալականացմանը և կարծրատիպերի շրջափուլին, որը կարող է շարունակաբար վերարտադրվել ամբողջ կյանքի ընթացքում, եթե դրանք չխնդրարկվեն: Այլ կերպ ասած՝ գենդերային նորմերն այն չափորոշիչներն ու ակնկալիքներն են, որոնց հարմարվում և համապատասխանում է անհատի սեռային ինքնությունը տվյալ հասարակության, համայնքի, մշակույթի և ժամանակահատվածի նախասահմանած չափով: Սեռային նորմերը հարափոփոխ են բոլոր մշակույթներում անկախ արտաքին ազդակներից:

Տե՛ս՝ UNICEF, UNFPA, UNDP, UN Women. "Gender Equality, UN Coherence and You".

Gender parity

Սեռային կամ գենդերային հավասարաբաշխումը

Սեռային հավասարաբաշխումը վերաբերում է կանանց և տղամարդկանց հավասար բաշխվածությանը, այսինքն ներկայացվածությանը որոշակի ոլորտում: Այն սեռահավասարության նախապայմաններից մեկն է, ինչպես և սեռային հատկանիշի համընդգրկումը, սակայն միայն սեռային հավասարաբաշխման միջոցով սեռահավասարություն չի կարող ապահովվել, որովհետև կանայք և տղամարդիկ, թեպետ հավասար ներկայացված, կարող են վերարտադրել սեռային անհավասարության և անարդարության մշակութապես կարծրացած գաղափարները: Այլ կերպ ասած՝ սեռային հավասարաբաշխումը սեռահավասարություն չէ:

Gender perspective

Սեռային կամ գենդերային հայեցակետը

Սեռային կամ գենդերային հայեցակետը որպես եզրույթ օգտագործվում է դիտարկելու անհատի սեռի կամ սեռային ինքնության ազդեցությունն իր հնարավորություններին, սոցիալական դերերին և շփմանը: Գենդերային հայեցակետը կիրառվում է գենդերային վերլուծության ժամանակ, որի արդյունքում հնարավոր է լինում սեռային հատկանիշը համընդգրկելու ինչ-որ օրինագծի, նախագծի կամ քաղաքանության մեջ:

Gender relations

Սեռային կամ գենդերային հարաբերություններ

Սեռային հարաբերությունները սոցիալական հարաբերությունների ենթատեսակ են, որոնք միավորում են կանանց և տղամարդկանց՝ որպես որոշակի համայնքի սոցիալական խմբեր: Այս հարաբերությունները ներառում են նաև այն, թե ինչպես են բաշխված տվյալ համայնքում իշխանությանը և ռեսուրսներին հասանելությունը և դրանց տնօրինումը կանանց և տղամարդկանց միջև: Սեռային հարաբերությունները փոխհատվում են սոցիալական հարաբերությունների այլ ներգործիչների հետ, ինչպիսիք են տարիքը, ազգային պատկանելությունը, ռասան, կրոնը, համոզմունքները ի թիվս այլոց: Այդ փոխհատման արդյունքում սահմանվում է տվյալ հասարակության մեջ անհատի դիրքը և ինքնությունը: Սեռային հարաբերությունները սոցիալական կառույցներ են և կարող են վերափոխվել ժամանակի ընթացքում՝ հանուն սեռային արդարության:

Gender roles Սեռային կամ գենդերային դերեր

Սեռային դերերը վերաբերում են սոցիալական և վարքային այն նորմերին, որոնք որոշակի մշակույթի շրջանակներում լայնորեն համարվում են սոցիալապես պատշաճ որոշակի սեռի անհատների համար: Դրանք հաճախ սահմանում են տղամարդկանց, կանանց, տղաներին և աղջիկներին տրված <<ավանդական>> պարտականություններն ու ակնկալիքները: Սեռային դերերը հաճախ պայմանավորված են տնային տնտեսությունների կառուցվածքով, ռեսուրսների հասանելիությամբ, համաշխարհային տնտեսության հատուկ ազդեցություններով, հակամարտությունների կամ աղետների առաջացումով և տեղահատուկ այնպիսի գործոններով, ինչպիսիք են էկոլոգիական պայմանները: Ինչպես ինքնին սեռը, սեռային դերերը կարող են զարգանալ ժամանակի ընթացքում, մասնավորապես կանանց զորացման և առնականության գերիշխող գաղափարների վերափոխման միջոցով:

Տե՛ս՝ UNICEF, UNFPA, UNDP, UN Women. "Gender Equality, UN Coherence and You".

Gender stereotypes

Սեռային կամ գենդերային կարծրատիպեր

Սեռային կամ գենդերային կարծրատիպերը գերպարզեցված ընդհանրացումներ են կանանց և տղամարդկանց սեռային հատկանիշների, տարբերությունների և դերերի վերաբերյալ: Տղամարդկանց մասին կարծրատիպային առանձնահատկություններն այն են, որ նրանք մրցակցային են, գործունյա, ինքնուրույն, անկախ, կռվարար, և իրատեսական: Զուգահեռաբար, կանանց վերաբերյալ կարծրատիպերը պնդում են, որ նրանք համագործակցային են, հոգատար, շփվող, մտահոգված հանրային բարիքներով: Կարծրատիպերը հաճախ օգտագործվում են գենդերային խտրությունն ավելի լայնորեն արդարացնելու համար և կարող են արտացոլվել և ամրապնդվել ավանդական և ժամանակակից տեսությունների, օրենքների և գերատեսչական պրակտիկաների միջոցով: Գենդերային կարծրատիպերը ամրապնդող ուղերձները և այն գաղափարը, որ կանայք ստորադաս են, փոխանցվում են բազմաթիվ եղանակներով՝ երգերից և գովազդից մինչև ավանդապատումներ և ասացվածքներ:

Gender-based Violence (GBV) Սեռահեն բռնություն

Սեռահեն բռնությունը ընդգրկուն եզրույթ է, որը վերաբերում է անձի կամքին հակառակ յուրաքանչյուր վնասակարգործողության, որն ունի սեռի կամ գենդերի հիմքով պայմանավորված սոցիալական հիմք: Այն բխում է արական և իգական սեռի ներկայացուցիչների միջև սոցիալապես վերագրված տարբերություններից:

Սեռահեն բռնության բնույթը և ծավալը տարբեր են կախված մշակութային, ազգային կամ տարածաշրջանային առանձնահատկություններից:

Սեռահեն բռնության օրինակներ են՝

- սեռական բռնությունը, ներառյալ սեռական շահագործումը, լլկումը կամ հարկադիր մարմնավաճառությունը,
- ընտանեկան բռնությունը,
- թրաֆիքինգը,
- բռնի կամ հարկադիր/վաղ ամուսնությունը,
- վնասակար ավանդույթները, օրինակ՝ «կարմիր խնձորը»,
- կանանց սեռական օրգանների խեղումը,
- հանուն պատվի սպանությունները,
- այրիների ժառանգումը կամ տագրամուսնությունը:

Բռնության դրսևորումները տարբեր են և ներառում են, բայց չեն սահմանափակվում ֆիզիկական, խոսքային/բանավոր, սեռական, հոգեբանական և սոցիալ-տնտեսական բռնությամբ:

Ֆիզիկական բռնությունը

ենթադրում է գործողություն, որը նպատակ ունի կամ հանգեցնում է ցավի կամ ֆիզիկական վնասի: Այն ներառում է **ծեծ, այրում,**

աքացի, ապտակ, բռունցքով հարված, անդամահատում կամ մարմնի խեղում, ինչպես նաև **առարկաների կամ զենքի կիրառում, մազապոկություն:** Ֆիզիկական բռնության ծայրահեղ դրսևորումները կարող են հանգեցնել կնասպանության կամ կնոջ սեռահեն սպանության: Որոշ դասակարգումներ նաև թրաֆիքինգը և ստրկությունը դիտարկում են որպես **ֆիզիկական բռնության տեսակ**, քանի որ սկզբում երիտասարդ կանայք և տղամարդիկ սովորաբար ենթարկվում են հարկադրանքի, իսկ հետագայում՝ բռնության՝ որպես ստրկացման հետևանք:

Խոսքային բռնությունը

Խոսքային բռնությունը ներառում է բանավոր չարաշահման տարբեր դրսևորումներ, որոնք կարող են տեղի ունենալ ինչպես առանձնության մեջ, այնպես էլ այլոց ներկայությամբ: Դրանք ընդգրկում են **նվաստացում, ծաղր, հայհոյանք և վիրավորական արտահայտություններ**, որոնք ուղղված են անհատին կամ նպատակ ունեն նրա համար անհարմարություն և հուզական տագնապ առաջացնելու: Խոսքային բռնությունը կարող է արտահայտվել նաև զոհի կամ նրա հարազատների նկատմամբ բռնության այլ տեսակներով սպառնալու ձևով:

Բանավոր բռնության այլ դրսևորումներ կարող են **առնչվել զոհի իրական կամ բռնարարի կողմից ենթադրվող՝**

- ծագմանը,
- կրոնական պատկանելությանը,
- սեռական ուղղությանը,
- լեզվին,
- հագուստին,
- սոցիալական կամ մշակութային որևէ այլ հատկանիշի:

Այսպիսի բռնության դրսևորումները հաճախ արտահայտվում են հանրային վիրավորանքներով, արհամարհական խոսքերով կամ ուղղակի սպառնալիքներով, որոնց նպատակն է զոհին ստորադասել, վախեցնել կամ մեկուսացնել:

Սեռական բռնությունը

ներառում է գործողություններ, որոնք անհատի կամքին հակառակ սեռական բնույթի ցավ կամ վիրավորանք են հասցնում կա՛մ մասնավոր, կա՛մ հանրային միջավայրում: Սեռական բռնության օրինակներ են բռնաբարությունը, որը ենթադրում է զոհի մարմին ներթափանցելու որևէ ձև, ամուսնական բռնաբարությունը և բռնաբարության որևէ այլ փորձ: Հարկադիր սեռական գործողության տեսակներ են նաև անհատին ստիպելը կամ հարկադրելը դիտելու սեռական բնույթի գործողություններ, ստիպելը կամ հարկադրելը ներգրավվել սեռական բնույթի գործողության մեջ այլոց ներկայությամբ, անպաշտպան հարաբերության պարտադրելը, սեռական ոտնձգությունը և կանանց պարագայում վերարտադրական լլկանքը՝ հարկադիր հղիություն, հղիության հարկադիր արհեստական ընդհատում, հարկադիր ստերջացում կամ ամլացում: Հայաստանյան համատեքստում սեռական բռնության տարածված դրսևորում է անչափահաս տղաներին **«աչքաբաց անելը»**, երբ սեռական փորձ ունեցող չափահաս ազգականը կամ ծանոթը դեռահաս տղային, սոցիալական և մշակութային ճնշման ներքո, ուղեկցում է դեպի սեռական նախափորձը սովորաբար չափահաս սեռական բնույթի ծառայություններ մատուցող կնոջ հետ:

Հոգեբանական բռնությունը

կարող է ներառել, օրինակ, սպառնալից վարքագիծ, որը պարտադիր չէ, որ պարունակի ֆիզիկական բռնություն կամ նույնիսկ բանավոր բռնություն: Այն կարող է ներառել գործողություններ, որոնք վերաբերում են նախկին բռնության ակտերին կամ դիմացինի նկատմամբ նպատակաուղղված անտեղյակությանը և անտեսմանը: Հոգեբանական բռնությունը կարող է իրականացվել նաև մեկուսացման կամ փակի տակ պահելու, տեղեկատվություն թաքցնելու, ապատեղեկատվության և այլնի միջոցով:

Սոցիալ-տնտեսական բռնությունը

գերիշխող սեռաուժային հարաբերությունների և՛ պատճառ, և՛ հետևանք կարող է լինել: Սոցիալ-տնտեսական բռնության տարածված դրսևորումներ են, օրինակ, անհատի աշխատավարձի յուրացումը կամ խլումը, առանձին եկամուտ ունենալու հնարավորությունից զրկումը՝ կանանց պարագայում հարկադիր տնային տնտեսուհու կարգավիճակում տեղադրելը, ընտանեկան ձեռնարկության մեջ առանց աշխատավարձի աշխատեցնելը կամ անհատին ֆիզիկական բռնությամբ աշխատանքի համար ոչ պիտանի դարձնելը: Հանրային ոլորտում սա կարող է ներառել կրթության կամ հիմնականում կանանց պարագայում վճարովի աշխատանքի հասանելությունից զրկելը, տարատեսակ ծառայություններից զրկելը, որոշակի աշխատանքից հեռացնելը, քաղաքացիական, մշակութային, սոցիալական կամ քաղաքական իրավունքները իրացնելու հնարավորության խաթարումը կամ զրկումը: Սոցիալ-տնտեսական բռնության տարածված ձև է պարտադրված պարտքը, որը բռնարարի սպառնալիքի, ուժի կամ խարդախության միջոցով բռնության զոհի անունով կամ զոհին պարտադրված պարտքն է: Այն հարկադիր վերահսկողության, ինքնության գողության և տնտեսական չարաշահումների ձև է և տարածվում է հիմնականում կանանց և խոցելի այլ խմբերի նկատմամբ:

Gender negative

Սեռային կամ գենդերային առումով բացասական

Սեռային առումով բացասական է համարվում այն մոտեցումը, որը միտումնավոր կամ ակամա օգտագործում է սեռային առկա անհավասարությունը, անարդարությունը, նորմերը կամ կարծրատիպերը ի շահ որևէ արդյունքի: Սեռային առումով բացասական կարելի է համարել, օրինակ, յուրաքանչյուր որոշում, որը ընդունվում է առանց հաշվի առնելու, որ այդ որոշումը կարող է տարբեր կերպ անդրադառնալ կանանց և տղամարդկանց վրա:

Gender neutral

Սեռային կամ գենդերային առումով չեզոք

Սեռային առումով չեզոք մոտեցման համաձայն՝ սեռը չի դիտարկվում որպես որևէ արդյունքի հասնելու համար գործոն: Արդյունքում սեռային նորմերը, դերերը և հարաբերությունները չեն ենթարկվում որևէ փոփոխության՝ ոչ վատթարանում են, ոչ էլ՝ բարելավվում:

Gender sensitive

Սեռազգայուն, գենդերազգայուն

Սեռազգայուն մոտեցման պարագայում սեռը զարգացման սահմանված նպատակներին հասնելու միջոց է: Այս մոտեցումը անդրադառնում է գենդերային նորմերին, դերերին և ռեսուրսների հասանելիությանը այնքանով, որքանով դա անհրաժեշտ է տվյալ ծրագրի նպատակներին հասնելու համար:

Gender positive

Սեռային/գենդերային առումով դրական

Սեռային առումով դրական մոտեցումը ենթադրում է սեռային հատկանիշի հատուկ շեշտադրում զարգացման դրական արդյունքներ գրանցելու հարցում: Այս պարագայում, սեռային նորմերի, դերերի և ռեսուրսների հասանելիության փոփոխությունը տվյալ ծրագրի արդյունքների հիմնական բաղադրիչն է:

Gender transformative

Սեռային կամ գենդերային առումով փոխակերպական

Սեռային առումով փոխակերպական մոտեցման պարագայում սեռի խնդրարկումը առանցքային է սեռահավասարության խթանման և զարգացման դրական արդյունքների հասնելու համար: Այս մոտեցումը փոխակերպում է անահավասար սեռային հարաբերությունները՝ համատեղ իշխանության, ռեսուրսների տնօրինման, որոշումների կայացման և կանանց զորացմանն աջակցելու նպատակով:

Gender-responsive budgeting

Սեռային կամ գենդերային առումով փոխասական բյուջետավորում

Սեռային առումով փոխասական բյուջետավորումը մեթոդ է՝ որոշելու, թե որքանով են պետական ծախսերը մոտեցել սեռահավասարության նպատակին: Սեռային առումով փոխասական բյուջեն կանանց համար առանձին բյուջեի մշակում չէ. փոխարենը՝ այն միջոց է վերլուծելու բյուջետային հատկացումները, պետական ծախսերը և հարկահանությունը սեռային հայեցակետից և կարող է հետագայում օգտագործվել բյուջեի վերաբաշխման համար՝ կանանց և տղամարդկանց սեռահատուկ կարիքներն և առաջնահերթություններին ավելի լավ փոխասելու, այսինքն անդրադառնալու նպատակով:

Glass ceiling Ապակյա առաստաղ

«Ապակյա առաստաղ» արտահայտությունը փոխաբերություն է, որը հաճախ օգտագործվում է նկարագրելու անտեսանելի պատնեշները կամ խոչընդոտները, որոնց միջով կանանց տեսանելի են լինում բարձր պաշտոններ, օրինակ՝ կառավարությունում կամ մասնավոր սեկտորում, բայց հասանելի չեն, որովհետև նրանք բախվում են անտեսանելի առաստաղին՝ պատնեշին: Այս խոչընդոտները կանանց և խոցելի փոքրամասնություններին խանգարում են աշխատանքային շուկայում ձեռք բերելու և ապահովելու ամենահեղինակավոր և ամենաբարձր վարձատրվող աշխատատեղերը:

Hegemony Գերիշխանություն

Գերիշխանությունը հատկապես կապված է իտալացի մարքսիստ փիլիսոփա, լեզվաբան և քաղաքագետ Անտոնիո Գրամշիի աշխատությունների հետ և նշանակում է մեկ դասակարգի կողմից հաստատութենական իշխանության և ազդեցության բոլոր դիրքերի և լծակների քողարկված տիրապետում: Մեկ դասակարգի գերիշխանությունը կարող է անժամկետ հետաձգել հեղափոխությունը: Հետևաբար, հեղափոխական կարևոր գործողություն է այդ կառուցվածքներ ներթափանցելն ու դրանք ներսից թուլացնելը:

Տե՛ս՝ The Oxford Dictionary of Philosophy

Hegemonic masculinity / Գերիշխ-ող/-անական առնականություն

Գերիշխանական առնականությունը մշակութային նորմ է, որը կապում է առնականությունը և տղամարդ լինելը իշխանության, վերահսկողության և տնտեսական ձեռքբերումներին: Առնականության այս կաղապարը ձևավորում է գերիշխող

դիրք, որը ոչ միայն խոչընդոտում է հավասարությանն ու ներառականությանը, այլև վնասում է հենց տղամարդկանց: Տվյալ մոդելում տղամարդկանց առողջական խնդիրները հաճախ ընկալվում են որպես թուլության դրսևորում՝ տարբերություն այն արտոնություններին, որոնք նրանք ստանում են գործող գենդերային հարաբերություններից՝ օրինակ ավելի բարձր եկամուտ, ավելի քիչ անվարձահատույց աշխատանք և որոշակի սոցիալական առավելություններ: Գերիշխանական առնականության գաղափարը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես են տղամարդ լինելու տարբեր ձևերը տվյալ մշակույթում ձևավորում աստիճանակարգային հարաբերություններ ոչ միայն կանանց և տղամարդկանց միջև, այլև հենց տղամարդկանց շրջանակում:

Այս եզրույթը ձևավորվել է 1980-ականներին՝ բացատրելու այն պրակտիկաները, որոնք նպաստում են տղամարդկանց առավել բարենպաստ սոցիալական դրությանը կանանց, ինչպես նաև որոշակի այլ տղամարդկանց նկատմամբ: Գերիշխանական առնականության հայեցակարգը հիմնված է այն գաղափարի վրա, որ տղամարդ լինելու մեկ գերիշխող ձև գոյություն ունի, և բոլոր տղամարդիկ դիրքավորվում են այդ պատկերացյալ իդեալին համապատասխանելու համատեքստում: Գերիշխող առնականությունը տղամարդկանց պարտադրում է յուրացնել վարքագծի անձնական նորմեր, որոնք նպաստում են այդ առնականության վերարտադրմանը: Այն տղամարդիկ, որոնք չեն համապատասխանում այս կաղապարին, ենթարկվում են լուսանցքավորման կամ ստորադասման:

Գերիշխանական առնականության պահանջները և դրան համապատասխանելու շարունակական ճնշումը նպաստում են հասարակության գենդերային կողմնակալությամբ պայմանավորված աստիճանակարգային կառուցվածքի պահպանմանը: Այն նաև ձևավորում է խիստ սահմանափակ առնականության իդեալ, որը կարող է հանգեցնել.

- տղամարդկանց ֆիզիկական և հոգեկան առողջության անտեսման,
- կանանց և այլ խմբերի նկատմամբ գերիշխանության հաստատման,
- հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և տղամարդկանց միջև ենթարկեցման, ստորադասման և վերակայության վերարտադրության:

Գերիշխանական առնականության քննադատությունը կարևոր է ոչ միայն սեռահավասարության հասնելու, այլև տղամարդկանց համար ավելի ազատ, ճկուն և առողջ ինքնության մոդելներ ձևավորելու համար:

Հմմտ՝ Connell, R. W. (1995). Masculinities, Cambridge, Polity Press.

Hegemonic femininity / Գերիշխ-ող/-անական կանացիություն

Գերիշխանական կանացիությունը կին լինելու իդեալականացված մոդելն է, որը թելադրված է հասարակական նորմերով: Նահապետական հասարակություններում այն սովորաբար հիմնված է լինում հնազանդության, խնամվածության, փխրունության և տղամարդկային վերակայության ճանաչման վրա: Գերիշխող կանացիության կաղապարը կանանցից պահանջում է.

- մարմնի և արտաքին տեսքի վերահսկում,
- զուսպ և խոնարհ վարք,
- ընտանեկան դերերի առաջնահերթություն,
- հուզական ինքնասահմանափակում:

Գերիշխանական կանացիությունը նպաստում է սեռային աստիճանակարգի պահպանմանը, սահմանափակում է կանանց հնարավորությունները և լուսանցքում է թողնում նրանց, ովքեր չեն համապատասխանում այս կաղապարին

(օրինակ՝ ֆեմինիստները, տարօրինակ/քվիր ինքնություն ունեցողները, առաջնորդող կանայք): Գերիշխող կանացիության ապակառուցումը կարևոր է կանացիության բազմազանության ճանաչման, կանանց ազատ ինքնադրսևորման և փոխհատական հայացքի ձևավորման համար: Սեռահավասարությունը պահանջում է, որ կանայք չսահմանափակվեն սոցիալական նորմերով, այլ ունենան ամբողջական ընտրության իրավունք:

Heteronormativity

Տարասեռականության հիմնաչափություն

Տարասեռականության հիմնաչափությունը վերհանում և նկարագրում է տարասեռականությունը որպես չափորոշչային սոցիալական նորմ, համաձայն որի տարասեռականությունը միակ սոցիալապես վավեր սեռական վարքագիծն է և յուրաքանչյուր ոք, ով չի հետևում սոցիալական և մշակութային այս կեցվածքին, հայտնվում է անբարենպաստ իրավիճակում: Տարասեռականության նորմավորումը ԼԳԲՏ անձանց դեմ խտրական և կանխակալ գաղափարների հիմքն է և կիրառվում է հատկապես երբ ԼԳԲՏ անձինք բացահայտ ինքնարտահայտվում կամ ընտանիք են կազմում:

Տե՛ս՝ LGBT Communication Manual, Brazilian Gay, Lesbian, Bisexual, Transvestite and Transsexual Association and UNAIDS

Human rights Մարդու իրավունքներ

Մարդու իրավունքները սովորաբար ընկալվում են որպես այն իրավունքները, որոնք բնորոշ են մարդուն: Համաձայն մարդու իրավունքների հայեցակարգի՝ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի օգտվելու իր մարդու իրավունքներից՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, սեռականությունից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ունեցվածքից կամ այլ կարգավիճակից: Մարդու իրավունքները օրենքով երաշխավորված են մարդու իրավունքների օրենսդրությամբ՝ պաշտպանելով անհատներին և խմբերին այն գործողություններից, որոնք կարող են խաթարել հիմնարար ազատությունները և մարդու արժանապատվությունը: Մարդու բոլոր իրավունքները և առնչակից գործիքները հավասարապես վերաբերում են և՛ տղամարդկանց, և՛ կանանց: Բացի այդ, CEDAW-ը հստակեցրել և լրամշակել է դրանցից մի քանիսը կանանց իրավունքների տեսանկյունից:

Տե՛ս՝ OHCHR (2000) Human Rights. A basic handbook for UN staff.

Human rights-based approach (HRBA)

Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում (ՄԻՀՄ)

Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը ենթադրում է գիտակցված և համակարգված ուշադրություն մարդու իրավունքներին ծրագրային մշակման բոլոր կողմերին: ՄԻՀՄ-ը մարդկային զարգացման գործընթացի հայեցակարգային շրջանակ է, որը հիմնաչափորեն հենվում է մարդու իրավունքների միջազգային չափանիշների վրա և գործառնականորեն ուղղված է մարդու իրավունքների խթանմանը և պաշտպանությանը: ՄԻՀՄ-ի նպատակն է զորացնելու մարդկանց (իրավատերերին)՝ իրացնելու իրենց իրավունքները և ուժեղացնելու պետությանը (պարտականություն կրողներին)՝ կատարելու իրենց մարդու իրավունքների պարտավորությունները և պարտականությունները: Մարդու իրավունքների նկատմամբ պետությունների պարտավորությունները պահանջում են նրանցից հարգել, պաշտպանել և իրականացնել կանանց և աղջիկների, ինչպես նաև տղամարդկանց և տղաների իրավունքները: Երբ պետությունները թերանում են, Միավորված ազգերի կազմակերպությունը պարտավոր է աշխատել գործընկերների հետ՝ խթանելու և զարգացնելու այդ պարտականությունն ավելի արդյունավետ իրականացնելուն ուղղված ջանքերն ու կարողությունները:

Սեռահավասարության խնդիրների նկատմամբ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը (ՄԻՀՄ) վերհանում է, թե ինչպես են մարդու իրավունքների խնդիրները տարբեր կերպ ազդում կանանց և տղամարդկանց վրա, և ինչպես են ուժային հարաբերությունները և սեռային խտրությունը ազդում բոլոր մարդկանց կողմից իրավունքների արդյունավետ իրացմանը:

ՄԻՀՄ-ն և գենդերային ինտեգրումը ՄԱԿ-ի ծրագրավորման հինգ սկզբունքներից երկուսն են՝ ի թիվս մյուսների՝ արդյունահեն կառավարման, բնապահպանական կայունության և կարողությունների զարգացման: Որպես այդպիսին, ՄԱԿ-ի յուրաքանչյուր աշխատակից պետք է օգտագործի դրանք իրենց ծրագրային աշխատանքներում:

Տե՛ս՝ UNICEF, UNFPA, UNDP, UN Women. "Gender Equality, UN Coherence and You"; HRBA portal

Implicit bias Ներակա կողմնակալություն, խոտորում

Ներակա կողմնակալությունը (կամ խոտորումը) վերաբերում է այն անգիտակցական նախապաշարմունքներին և ենթադրություններին, որոնք ձևավորում են մեր ընկալումները, վերաբերմունքը և որոշումները՝ առանց գիտակցված մտորման:

Ներակա խոտորումը կարող է ազդել.

- սեռային և գենդերային ընկալումների,
- աշխատանքի և կրթության ոլորտում հավասար հնարավորությունների,
- հասարակական ու քաղաքական որոշումների վրա:

Ներակա կողմնակալությունը հաճախ ամրապնդում է սոցիալական անհավասարություններն ու սեռային աստիճանակարգերը, քանի որ մարդիկ կարող են ընդունել կողմնակալ որոշումներ՝ առանց գիտակցելու դրանց ազդեցությունը:

Ներակա խոտորման հաղթահարումը պահանջում է.

- գիտակցված վերլուծություն՝ հասկանալու մեր ներակա կողմնակալությունները,
- հակակողմնակալ կրթություն և բազմազանության խթանում,
- կառուցվածքային փոփոխություններ, որոնք նվազեցնում են անարդարության վերարտադրությունը:

Հմմտ.՝ https://www.apa.org/topics/implicit-bias

Inter-Agency Network on Women and Gender Equality (IANWGE)

Կանանց և գենդերային հավասարության միջգերատեսչական ցանցը

Կանանց և գենդերային հավասարության միջգերատեսչական ցանցը ՄԱԿ-ի գրասենյակներում, մասնագիտացված գործակալություններում, հիմնադրամներում և ծրագրերում գենդերային հարցերով պատասխանատուների ցանց է, որը նախագահում է ՄԱԿ-ի Կանայք: ՄԱԿ-ի Կանայք կառույցը նաև ծառայում է որպես ցանցի քարտուղարություն: Ցանցում ներկայացված են ՄԱԿ-ի բոլոր անդամ կազմակերպությունները:

Տե՛ս՝ UN IANGWE

Intersectionality Փոխհատականություն

Եզրույթ, որը փոխաբերական կերպով ներկայացնում է անհատի ինքնության բազմակի առանձնահատկությունները, որոնցից յուրաքանչյուրը առանձին կամ անձնային այլ առանձնահատկությունների հետ փոխհատվելով կարող է անհավասարության կամ խտրության հիմք հանդիսանալ: Սեռահավասարության խոսույթում սովորաբար շեշտը դրվում է միայն սեռային հատկանիշի վրա, սակայն անհավասարության հիմք կարող են հանդիսանալ նաև խավը, լեզուն, սոցիալական կարգավիճակը, մաշկի գույնը, սեռական ուղղությունը, տարիքը, հաշմանդամությունը, կրթական աստիճանը, արտաքին տեսքը, մարմնի կառուցվածքը, հասակը և այլն: Փոխհատական մոտեցմամբ համեմատենք հետևյալ անհատների՝ ազգային մեծամասնություն ներկայացնող միջին տարիքի և հասակի կնոջ և ազգային փոքրամասնություն ներկայացնող հաշմանդամ ծեր կնոջ փորձառությունը հնարավոր խտրության անհավասարության առումով: Թեև սեռային հատկանիշով անհավասարության կարող են երկուսն էլ ենթարկվել, երկրորդի պարագայում ավելանում են էթնիկ, հաշմանդամության և տարիքային հիմքով խտրության հնարավոր ձևերը, որոնք միջազգային եզրաբանությամբ համապատասխանաբար կոչվում են ռասիզմ (ռասայական հիմքով խտրություն), էյբլիզմ (հաշմանդամության հիմքով խտրություն) և էյջիզմ (տարիքային հիմքով խտրություն):

Intersexuality Միջսեռականություն

Միջսեռականությունը կենսաբանական բնութագիր է, որը վերաբերում է այն անհատներին, որոնց սեռային հատկանիշները (քրոմոսոմներ, հորմոններ, ներքին կամ արտաքին սեռական օրգաններ) չեն տեղավորվում բժշկագիտորեն սահմանված «տղամարդ» կամ «կին» երկբևեռ կաղապարի մեջ:

Միջսեռականության առանձնահատկությունները կարող են դրսևորվել.

- ծննդյան պահին նկատելի ֆիզիկական տարբերություններով,
- հորմոնային կամ քրոմոսոմային շեղումներով, որոնք կարող են բացահայտվել կյանքի տարբեր փուլերում,
- բժշկական միջամտության անհրաժեշտության վերաբերյալ խնդրահարույց սոցիալական ու բժշկական որոշումներով:

Տե՛ս՝ https://www.ohchr.org/en/sexual-orientation-and-gender-identity/intersex-people

Marginalization Լուսանցքավորում

Լուսանցքավորումը սոցիալական գործընթաց է, որի միջոցով անհատներն ու խմբերը մղվում են հասարակության կենտրոնական դիրքերից դեպի եզրագիծ՝ զրկվելով սոցիալական, քաղաքական, տնտեսական կամ մշակութային ներգրավվածությունից ու հնարավորություններից:

Լուսանցքավորմանը կարող են ենթարկվել մարդիկ՝

- սեռային ինքնության,
- ազգային պատկանելության,
- սեռական ուղղության կամ ինքնության,
- սոցիալական դասի,
- հաշմանդամության կամ առողջական վիճակի,
- կրոնական կամ լեզվական պատկանելության հիմքով:

Լուսանցքավորումը հանգեցնում է՝

- հասարակական և քաղաքական որոշումների վրա ազդեցության նվազեցման,
- տնտեսական ռեսուրսներից և կրթական հնարավորություններից զրկվելու,
- սոցիալական ու մշակութային տեսանելիության նվազման,
- հոգեբանական և հուզական ճնշումների:

Լուսանցքավորման դեմ պայքարը ներառում է՝

- հավասար հնարավորությունների ապահովում,
- քաղաքական և տնտեսական ներառականության խթանում,

- հանրային խոսույթում բազմազանության ընդունում,
- փոխհատական հայացքի ձևավորում, որը հաշվի է առնում ճնշումների փոխհատվող ազդեցությունը տարբեր խմբերի վրա:

Լուսանցքավորումը սոցիալական անհավասարության և անարդարակշռության հիմնական գործոններից է, և դրա հաղթահարումը պահանջում է կառուցվածքային փոփոխություններ, գիտակցված քաղաքականություն և մշակութային վերաիմաստավորում:

Masculinity Առնականություն

Առնականությունը սեռային հայեցակետ է կամ անհատի հնարավորություններին, սոցիալական դերերին և առնչություններին այդ հայեցակետի ազդեցությունը վերլուծելու միջոց, որը տեսանելի է դարձնում տղաների և տղամարդկանց նկատմամբ ճնշումը ինչ-որ դեր կատարելու կամ սոցիալ-մշակութային ակնկալիքներին համապատասխանելու: Առնականությունը արականության վերաբերյալ սոցիալական պատկերացումն է, որը կառուցվում և սահմանվում է սոցիալապես, պատմականորեն և քաղաքականապես և որը վերագրվում է կենսաբանական սեռին, բայց չի բխում դրանից: Առնականության գաղափարները, պատկերացումները և սահմանումները տարբերվում են մշակույթից մշակույթ և փոփոխվում են նույնիսկ նույն համայնքում ժամանակի ընթացքում: Առնականությունը վերաբերում է այն ընկալումներին ու իդեալներին, որոնց տղամարդիկ ակնկալվում է, որ պիտի համապատասխանեն: Առնականությունը չի վերաբերում միայն տղամարդկանց. կանայք ևս դրսևորում, վերարտադրում կամ պարտադրում են տղամարդ լինելու այս պատկերացումները:

Menopause Դաշտանադադար

Դաշտանադադարը կենսաբանական գործընթաց է, որը բնորոշ է մարդկանց, որոնք ծնվել են իգական վերարտադրական համակարգով և առաջանում է, երբ դաշտանային շրջափուլերը դադարում են հորմոնային փոփոխությունների հետևանքով: Այն սովորաբար տեղի է ունենում 45-55 տարեկանում, սակայն կարող է առաջանալ ավելի վաղ կամ ուշ՝ կախված անհատական, գենետիկական կամ առողջական գործոններից: Դաշտանադադարը հաճախ ենթարկվել է **մշակութային տաբուների**, ինչը հանգեցրել է դրա շուրջ լռության և թյուր պատկերացումների: Շատ հասարակություններում այն դիտարկվել է որպես **ծերացման նշան**, ինչը կարող է ազդել կանանց ինքնընկալման, սոցիալական կարգավիճակի և մասնագիտական կյանքի վրա:

Menstruation Դաշտան, ամսահոսություն

Տարբեր մշակույթներում դաշտանը պատմականորեն ենթարկվել է խարանի, լռության և սոցիալական սահմանափակումների, ինչը հանգեցրել է դրա վերաբերյալ անբավարար իրազեկության, ամոթի և բացասական վերաբերմունքի: Շատ հասարակություններում դաշտանը կապվել է անմաքրության, անկարողության կամ սահմանափակումների հետ: Արդյունքում դաշտան ունեցող անձինք հաճախ ենթարկվել են մեկուսացման կամ խտրության:

Դաշտանի վերաբերյալ տաբուները արտահայտվել են տարբեր ձևերով՝

- խոսույթի սահմանափակում. դաշտանը ներկայացվել է որպես «անհարմար» կամ «կանացի» թեմա, ինչը խոչընդոտել է առողջապահական կրթության տարածմանը: Հատկանշական է, որ ցայսօր

դաշտանի վերաբերյալ բառապաշարի կիրառությունը խիստ սահմանափակ է հայերենում:

- մշակութային սահմանափակումներ. որոշ մշակույթներում դաշտան ունեցող անձանց ժամանակավորապես արգելվել է մասնակցել հանրային կամ կրոնական ծեսերին,
- առողջապահական և տնտեսական խոչընդոտներ. դաշտանային ապրանքների անհասանելիությունը, թանկությունը կամ դրանց նկատմամբ սոցիալական տաբուները հանգեցրել են «դաշտանային աղքատության», երբ անհատները զրկված են հիգիենայի տարրական միջոցներից:
- կրթական և աշխատանքային խոչընդոտներ. դպրոցներում և աշխատավայրերում դաշտանային առողջության անտեսումը դարձել է անհարմարության կամ խտրության պատճառ, երբեմն ստիպելով անհատներին բացակայել կամ սահմանափակել իրենց գործունեությունը:

Վերջին տարիներին հասարակության տարբեր շերտերում նկատվում է դաշտանի վերաբերյալ բաց խոսույթի խթանում, որի նպատակն է հաղթահարել ամոթի ու լռության մշակույթը և ապահովել իրազեկում, առողջապահական աջակցություն և տնտեսական մատչելիություն:

Multiple discrimination Բազմակի խտրություն

Բազմակի խտրությունը գաղափար է, որը նկարագրում է խտրության բազմաշերտությունը, համաձայն որի խտրության համար կարող են լինել մեկից ավելի հիմք: Այն նաև հայտնի է «հավելային», «կուտակային», «բաղադրյալ», «փոխհատական», «բարդ կողմնակալություն» կամ «բազմաչափ անհավասարություններ» եզրույթներով: Թեև եզրաբանությունը կարող է շփոթեցնող թվալ, այն հակված է նկարագրելու երկու իրավիճակ՝

(1) իրավիճակ, երբ անհատը բախվում է մեկից ավելի հիմքունեցող խտրության ձևերի (այսինքն՝ սեռը գումարած հաշմանդամության խտրությունը կամ սեռը գումարած սեռական ուղղությունը): Նման հանգամանքներում բոլոր կանայք և հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք (ինչպես արական, այնպես էլ իգական) ենթարկվում են խտրության՝ չնայած որ նրանց սեռը տարբեր է, բայց խտրության համար առկա է մեկ այլ հատկանիշ՝ հաշմանդամությունը:

(2) Իրավիճակը, երբ խտրությունը ազդում է միայն նրանց վրա, որոնք պատկանում են մեկից ավելի սոցիալական խմբի (այսինքն՝ միայն հաշմանդամություն ունեցող կանայք կարող են ենթարկվել խտրության, և ոչ հաշմանդամություն ունեցող տղամարդիկ): Մասնագիտական գրականության մեջ սա նաև հայտնի է որպես փոխհատական խտրություն:

Տե՛ս՝ Sheppard, Colleen. 2011. Multiple Discrimination in the World of Work, Working Paper no. 66. International Labour Organization: Geneva.

Patriarchy

Նահապետություն, նահապետականություն, հայրիշխանություն

Նահապետությունը կամ նահապետականությունը հասարակության կազմակերպման ավանդական ձև է, որի հիմքում ընկած է սեռային անհավասարությունը: Ըստ սոցիալական համակարգի այս տեսակի՝ տղամարդը կամ առնականը ավելի կարևոր է համարվում քան կինը կամ կանացին: Ընդ որում, առնականության և կանացիության պատկերացումները նահապետական իրականության մեջ հարափոփոխ են, սակայն հիմնվում են տղամարդու գործորդության, իսկ կնոջ վերարտադրողական կամ սեռական գործառույթների մասին պատկերացումների վրա:

Նահապետությունը ընդարձակ համակարգ է և ընդգրկում է աշխարհի գրեթե բոլոր մշակույթները: Պատմականորեն հասարակությունները կազմակերպվել են այնպես, որ սեփականությունը, ունեցվածքը, ժառանգականությունը, ինչպես նաև կենսակազմակերպմանը վերաբերող բոլոր հարցերի շուրջ որոշումները լինեն տղամարդու իրավասությունը: Նահապետության վերարտադրության համար հիմք են ծառայել կեղծ կենսաբանական պնդումները, որոնք ցայսօր շարունակում են արդարացնել կամ իրականացնել սեռային խտրություն:

Postcolonial feminist theory

Հետգաղութային ֆեմինիստական տեսություն

Հետգաղութային ֆեմինիստական տեսությունը ուսումնասիրում է գաղութատիրության և գաղութային ժառանգության ազդեցությունը կանանց և սեռային հարաբերությունների վրա, ընդգծելով, թե ինչպես են ռասայական, էթնիկ և դասային ճնշումները հատվում սեռային անհավասարության հետ: Գաղութատիրությունն ամրապնդել է արևմտյան գերիշխանությունը, որը կանանց և տարաձայն խմբերի լուսանցքավորման միջոցով հաստատել է ուժային կառուցվածքներ: Արևմտյան ֆեմինիզմը հաճախ հաշվի չի առել ոչ արևմտյան կանանց փորձառությունները, ներկայացնելով նրանց որպես կրավորական զոհ և ձևավորելով միատարր պատկեր՝ անտեսելով մշակութային ու պատմական տարբերությունները: Հետգաղութային ֆեմինիստական տեսությունը շեշտադրում է փոխհատական հայացքը, ըստ որի սեռային, ռասայական, դասային և մշակութային բացառման և ստորադասման դրսևորումները գործում են համատեղ:

Power Իշխանություն

Իշխանությունը ներառում է որոշումներ կայացնելու և գործելու կարողություն, հմտություն կամ ունակություն, ֆիզիկական ուժ կամ զորություն: Իշխանության գործադրումը բոլոր տեսակի հարաբերություններում որոշիչ դեր ունի. որքան ավելի շատ իշխանություն ունի անհատը, այնքան ավելի շատ ընտրության հնարավորություն կա նրա համար: Այն անհատները, որոնք ավելի քիչ իշխանություն ունեն, ընտրության ավելի քիչ հնարավորություններ կան իրենց համար և, հետևաբար, ավելի խոցելի են չարաշահումների նկատմամբ: Երբ կանանց շարժումները, ֆեմինիստական խմբերը և հասարակական զարգացմանն ուղղված կազմակերպությունները օգնում են մարդկանց անհատապես և հավաքականորեն «իշխանություն» ձեռք բերելու՝ զորանալու, իշխանությունն այս պարագայում չի ընկալվում իշխելու կամ հպատակեցնելու ավանդական իմաստով: Այն, փոխարենը, ընկալվում է որպես զորացման բարդ և բազմակողմանի գործընթաց, որտեղ կարևոր են գործակցային և անհատական ներքին զորությունը.

- Գործակցային զորությունը սոցիալ-քաղաքական զորության տեսակ է, որը կարևորում է ընդհանուր նպատակը, փոխըմբռնումը և ունակությունը գործակցելու ի շահ և պաշտպանություն ընդհանուր նպատակի կամ շահի՝ լինեն դրանք անհատական կամ հավաքական իրավունքներ, թե քաղաքական գաղափարներ: Հավաքական առումով մարդիկ զորեղ են, երբ գիտակցում են, որ կարող են միավորվել հանուն ընդհանուր նպատակի կամ տեսլականի:
- Անհատական ներքին զորությունը ավելի շատ վերաբերում է անհատի ինքնագիտակցությանը, ինքնագնահատականին, ինքնությանը և հաստատակամությանը: Այն նշանակում է, թե ինչպես է անհատը ինքնավերլուծության, ներհայման և ներքին ուժի միջոցով, ներգործում իր իսկ կյանքին և դրա փոփոխություններին:

Queer Տարօրինակ, քվիր

Տարօրինակությունը (անգլ. Queer) եզրույթ է, որը մատնանշում է բազմազանությունը սեռային և սեռական ինքնությունների, որոնք դուրս են կրկնակ (բինար) և նորմատիվ կառուցվածքներից: Այն կարող է վերաբերվել սեռական ուղղությանը, սեռային/գենդերային ինքնությանը կամ երկուսին միաժամանակ: Սկզբնապես **«տարօրինակ»** (queer) բառը օգտագործվել է որպես նվաստացնող բնորոշում ԼԳԲՏՔ+ անձանց նկատմամբ, իսկ արդեն 1990-ականներից սկսած այն այդ բառի հասցեատեր անձինք սկսել են վերաիմաստավորել այն և ընդունել որպես իրենց ինքնության դրական ու ընդգրկուն եզրույթ:

Հայկական համատեքստում «տարօրինակ» բառը կարող է ընկալվել որպես անսովոր կամ նույնիսկ բացասական երանգ ունեցող եզրույթ, ինչը բարդացնում է դրա լայն կիրառությունը գենդերային և սեռական ինքնությունների քննարկումներում: Չնայած դրան՝ այն արդեն օգտագործվել է, օրինակ, **«Տարօրինակելով Երևանը»** նախաձեռնության շրջանակում հենց քվիր իմաստով քվիր անձանց կողմից:

Շատերը նախընտրում են օգտագործել **«քվիր»** բառը նկատելով, որ «տարօրինակ» բառը հայերենում կարող է ունենալ բացասական երանգ: Սակայն դա անտեսում է այն փաստը, որ **«քվիր»** բառն անգլերենում սկզբնապես նույնքան բացասական իմաստ է ունեցել, որքան **«տարօրինակ»** բառը հայերենում: Երկու բառերն էլ իրենց լեզվական ու քաղաքական վերաիմաստավորման ճանապարհով դուրս են եկել նախնական բացասական խոսույթց և վերածվել են ինքնության, դիմադրության ու քաղաքականության գործիքների: Այս համատեքստում կարևոր է հասկանալ, որ լեզվական վերաիմաստավորումը և ինքնության անվանման իրավունքը նույնքան կարևոր են, որքան ինքը սեռային և սեռական բազմազանության տեսանելիությունը: **«Տարօրինակ»** բառի նկատմամբ դիմադրությունը ցույց է տալիս, թե ինչպես կարող են լեզվական նախապաշարմունքները

սահմանափակել տեղայնացված սեռային ու քվիր դիսկուրսների ձևավորումը: Միևնույն ժամանակ, դա կարևոր դաշտ է, որտեղ հնարավոր է լեզվական և մշակութային հարմարեցումների միջոցով ստեղծել ներառական ու իմաստային հարուստ խոսույթ:

Տարօրինակ տեսությունը (Queer Theory) զարգացել է որպես ակադեմիական և քաղաքական քննադատություն՝ խնդրարկելով բինար/կրկնակ գենդերային համակարգերի, պարտադրված գերիշխանական նորմերի և սեռականության խիստ սահմանումների դեմ:

Reproductive rights Վերարտադրական իրավունքներ

Վերարտադրական իրավունքները հիմնված են բոլոր զույգերի և անհատների հիմնարար իրավունքի ճանաչման վրա՝ ազատ և պատասխանատու կերպով որոշելու իրենց երեխաների քանակը, երեխաների միջև տարիքային տարբերությունը և ժամանակը, ինչպես նաև ունենալու դրա համար տեղեկատվություն և միջոցներ: Վերարտադրական իրավունքներից է նաև սեռական կյանքի և վերարտադրական առողջության ամենաբարձր չափանիշների ձեռքբերման իրավունքը, ինչպես նաև առանց խտրության, հարկադրանքի և բռնության՝ վերարտադրության վերաբերյալ որոշումներ կայացնելու բոլորի իրավունքը:

Տե՛ս՝ United Nations (2014) Programme of Action of the International Conference on Population and Development, para 7.3.

Reverse sexism Հակադարձ սեռային խտրություն

Հակադարձ սեռային խտրություն» արտահայտությունը հաճախ օգտագործվում է կանանց և այլ սեռային խմբերի նկատմամբ նախկինում գործադրված խտրության դեմ ուղղված քաղաքականությունների կամ շարժումների արդյունքում տղամարդկանց ենթադրյալ խտրելու մասին խոսելու համար: Այն սովորաբար կապվում է սեռահավասարությանն ուղղված հաստատական գործողությունների կամ ֆեմինիստական փոփոխությունների հետ, երբ որոշ մարդիկ պնդում են, որ նման նախաձեռնությունները «անարդար են տղամարդկանց նկատմամբ»:

Հակադարձ սեռային խտրության գաղափարը հաճախ օգտագործվում է ֆեմինիզմի դեմ պայքարող խմբերի կողմից՝ պնդելով, որ տղամարդիկ «նույնպես բախվում են խտրության»: Սակայն այս պնդումը անտեսում է համակարգային ուժային հարաբերությունները, որտեղ կանայք և այլ սեռային խմբեր պատմականորեն և տակավին ավելի խոցելի են: Որոշ դեպքերում «հակադարձ խտրության» հռետորաբանությունը կարող է ծառայել որպես հավասարությանն ուղղված փոփոխությունները խափանելու գործիք՝ մերժելով այն հիմնարար խնդիրները, որոնք պահանջում են լուծում:

Խտրությունը պահանջում է ուժային անհավասարություն. պատմականորեն տղամարդիկ ունեն առավել մեծ քաղաքական, տնտեսական և մշակութային ազդեցություն, ուստի կանանց նկատմամբ կիրառված խտրությունը համակարգային է, մինչդեռ տղամարդկանց առանձին անհատական դեպքերը չեն վերածվում նույն մակարդակի ճնշման: Ֆեմինիզմը չի ձգտում տղամարդկանց սահմանափակմանը, այլ փորձում է պայքարել հանուն հավասար հնարավորությունների ստեղծմանը: Այն քայլերը, որոնք խրախուսում են կանանց ղեկավար դերը, սեռահավասար աշխատավարձը կամ ընտանեկան պարտականությունների հավասար բաշխումը, նպատակ չունեն խտրելու, այլ ուղղված են պատմական անհավասարության նվազեցմանը:

Sex (biological sex) Սեռ, կենսաբանական սեռ

Սեռը ֆիզիկական և կենսաբանական հատկանիշների համագումարն է, որը տարբերակում է արական, իգական և միջսեռական անհատներին:

Sex-disaggregated data

Սեռով զատորոշված տվյալներ

Սեռով զատորոշված տվյալներն այն տվյալներն են, որոնք դասակարգվում են ըստ սեռի՝ առանձին-առանձին ներկայացնելով տեղեկություն տղամարդկանց և կանանց, տղաների և աղջիկների վերաբերյալ: Սեռով զատորոշված տվյալները արտացոլում են դերերը, իրական իրավիճակները, կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների ընդհանուր վիճակը հասարակության բոլոր բնագավառներում, օրինակ՝ գրագիտության և կրթության մակարդակը, ձեռնարկատիրությունը, սեփականությունը, զբաղվածությունը, աշխատավարձի տարբերությունները, խնամակալները, տան և հողի սեփականությունը, փոխառությունները և վարկերը, պարտքերը և այլն: Երբ տվյալները զատորոշված չեն ըստ սեռի, ավելի դժվար է բացահայտել իրական և հնարավոր անհավասարությունը: Սեռով զատորոշված տվյալները անհրաժեշտ են սեռային արդյունավետ վերլուծության համար:

Տե՛ս՝ UNICEF, UNFPA, UNDP, UN Women. "Gender Equality, UN Coherence and You"; UNESCO (2003) Gender Mainstreaming Implementation Framework

Sexual and reproductive health and rights (SRHR)

Սեռական և վերարտադրողական առողջություն և իրավունքներ

Սեռական և վերարտադրական առողջությունը և իրավունքները (ՍՎԱԻ) կարող են ընկալվել որպես բոլորի՝ երիտասարդ, թե տարեց, կին, տղամարդ, թե անդրսեռական, տարասեռական, միասեռական, լեսբի, թե երկսեռական, ՄԻԱՎ ունեցող, թե ոչ, սեփական սեռականության և վերարտադրության վերաբերյալ ընտրություն կատարելու իրավունք՝ պայմանով, որ նրանք հարգեն այլոց մարմնային լրության իրավունքները: Այս սահմանումը ներառում է նաև անհատի ընտրությանը աջակցելու և առողջության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ տեղեկատվությանը և ծառայություններին հասանելության իրավունք:

S'ես՝ UNICEF, UNFPA, UNDP, UN Women. "Gender Equality, UN Coherence and You".

Sexual orientation Սեռական ուղղություն

Սեռական ուղղությունը վերաբերում է տարբեր, նույն կամ մեկից ավելի սեռի անհատների նկատմամբ խորը հուզական, զգացմունքային, սիրային և սեռաբնույթ գրավչության, ինչպես նաև մտերիմ կամ սեռական հարաբերություններ ունենալու յուրաքանչյուր անձի կարողությանը: Հիմնականում կան սեռականության երեք գերակշռող ուղղություն՝ նույն սեռի նկատմամբ (միասեռականություն), հակառակ սեռի նկատմամբ (տարասեռականություն) կամ երկու սեռերի նկատմամբ (երկսեռականություն):

Հայերենում շրջանառվում է նաև սեռական կողմնորոշում արտահայտությունը, որի որոշում արմատը խնդրահարույց է և կարող է ստեղծել տպավորություն, որ անհատը ինքն է որոշում իր սեռական ուղղությունը: Սեռական ուղղությունը՝ սեռականությունը և սեռական վարքագիծը տարբեր են: Մինչ անհատը չի ընտրում լինել նույնասեռական, տարասեռական կամ երկսեռական՝ սեռական վարքագիծը հիմնված է անհատի ընտրության վրա, այսինքն անհատը կարող է ունենալ բնատուր սեռական որոշակի ուղղություն, բայց գործնականում ցուցաբերել սեռական այլ վարքագիծ (Տե՛ս ստորև՝ սեռական վարքագիծ): Սա հիմնականում տարածվում է նահապետական անբարենպաստ մշակույթներում, որտեղ անհատի ճշմարիտ սեռական ուղղության բացահայտումը կարող է հանգեցնել խարանի կամ կյանքի և առողջության համար վտանգի: Ի հեճուկս նահապետական շահարկումների՝ հիմնականում նաև քաղաքական բնույթի՝ հասարակության մեջ պատմականորեն անհատների սեռականության հիմնական ուղղությունների տոկոսային հարաբերությունը չի փոփոխվում, բայց բարենպաստ և անվտանգ պայմանների ստեղծման և գիտելիքի տրամադրման արդյունքում անհատները կարող են ավելի լիարժեք երջանիկ կյանք վարել անթաքույց:

Sexual behavior Սեռական վարք(ագիծ)

Սեռական վարքը (կամ սեռական վարքագիծը) ներառում է գործողությունների ամբողջություն, որոնց միջոցով անհատներն արտահայտում են իրենց սեռականությունը: Սեռական վարքն ընդգրկում է ինչպես ակտիվ սեռական փոխազդեցությունները, այնպես էլ սեռական գործունեությունից զերծ մնալու որոշումները:

Սեռական վարքի որոշ տեսակներ ներառում են.

Ժուժկալություն՝ սեռական ակտիվությունից զերծ մնալու որոշում, որը կարող է պայմանավորված լինել անհատի համոզմունքներով, մշակութային կամ կրոնական գործոններով,

Կուսակրոնություն՝ սովորաբար վերաբերում է սեռական հարաբերություններից ամբողջ կյանքի ընթացքում հրաժարվելուն,

Ամուրիություն՝ երկարաժամկետ կամ ժամանակավոր սեռական կապերից հրաժարում, որը կարող է լինել գիտակցված կամ պայմանավորված հանգամանքներով:

Սեռական վարքը, ի տարբերություն սեռական ուղղության, հաճախ կախված է անձի ընտրությունից, սոցիալական միջավայրից, հարաբերություններից և մշակութային նորմերից: Այն կարող է փոփոխվել կյանքի ընթացքում՝ կախված անհատի անձնական, հոգեբանական և սոցիալական զարգացումից:

Սեռական վարքը ձևավորվում է մշակութային, կրոնական, իրավական և անձնական գործոնների ազդեցության ներքո: Հասարակության մեջ տարբեր ժամանակներում և տարբեր մշակույթներում որոշակի սեռական վարք կարող է ընկալվել որպես ընդունելի, խրախուսելի կամ հակառակը՝ արգելված և դատապարտելի:

Տե՛ս՝ Crooks, R., & Baur, K. (2008). Our sexuality (10th ed.). Pacific Grove, CA: Thomson.

Sexual Rights Սեռական իրավունքներ

Սեռական իրավունքները ներառում են մարդու իրավունքները, որոնք արդեն ճանաչված են պետությունների ազգային օրենսդրությամբ, մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերում և ընդունված այլ փաստաթղթերում: Դրանք ներառում են բոլոր անձանց, առանց հարկադրանքի, խտրության և բռնության,

- սեռականության հետ կապված առողջության ամենաբարձր հասանելի չափորոշիչներին հասանելության իրավունքը՝ ներառյալ սեռական և վերարտադրողական առողջության պահպանման ծառայություններից օգտվելու հնարավորությունը,
- սեռականության վերաբերյալ տեղեկատվություն փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը,
- սեռականության վերաբերյալ կրթության իրավունքը,
- մարմնային լրության նկատմամբ հարգանքի, զուգընկերոջ ընտրության, սեռական կյանքով ապրելու կամ չապրելու, համահավան սեռական հարաբերություններ ունենալու, համահավան ամուսնության, երեխաներ ունենալ-չունենալու որոշում կայացնելու, բավարար, անվտանգ և հաճելի սեռական կյանք վարելու իրավունքը:

Տե՛ս՝ World Health Organization, Gender and human rights.

Son Preference Արու զավակի նախապատվություն

Արու զավակին նախապատվություն տալու պրակտիկան առավել տարածված է աղքատ համայնքներում, որտեղ աղջիկ երեխաներին դիտարկում են որպես բեռ ընտանիքի համար, իսկ տղաներին՝ որպես առավելություն կամ հարստություն: Արու զավակին նախապատվություն տալու ծայրահեղ արտահայտումը իգական սեռի սաղմերի արհեստական հեռացումն է հղիության՝ սեռով պայմանավորված ընդհատումների միջոցով: Որոշ երկրներում սա հանգեցրել է բնակչության սեռային անհամամասնության, ինչի հետևանքներից են կանանց թրաֆիքինգի աճը և սեռական աշխատանքի տարածվածության բարձրացումը:

Stalking Հետամտում

Հետամտում է համարվում դիտավորությամբ շարունակաբար սպառնալից գործողություններ կատարելը, որոնք անձի մոտ վախ են հարուցում սեփական անվտանգության համար:

Unpaid care work Անվարձահատույց խնամք

Անվարձահատույց խնամատարությունը աշխատանք է, որն ընդգրկում է կյանքի և առողջության պահպանման համար առօրյա բոլոր գործունեությունները, ինչպիսիք են տնային աշխատանքը (սննդի պատրաստում, մաքրում, լվացք) և անձնական խնամքը (հատկապես երեխաների, տարեցների, հիվանդ կամ հաշմանդամություն ունեցող ահատների): Այս գործողությունները տնային տնտեսություններում մեծամասամբ կանայք են իրականացնում անվճար:

Սոցիալական և տնտեսական չնչին արժեքը, որը տրվում է այս աշխատանքին, կտրուկ հակադրվում է ընտանիքի և հասարակության համար դրա իրական կարևորությանը: Ավելին, ֆեմինիստական տնտեսագիտությունը ցույց է տալիս, որ խնամատարությունը սոցիալ-տնտեսական համակարգի անտեսանելի հիմքն է: Սակայն այն պատճառով, որ խնամատարությունը համարվում է «կնոջ գործ», այն հիմնականում չի վարձատրվում: Քանի որ խնամատարությանը դրամական արժեք չի տրվում, այն չի չափվում և դառնում է անտեսանելի, որի արդյունքում էլ այն հաշվի չի առնվում քաղաքականության մշակման ժամանակ (Orozco 2010):

Տե՛ս՝ Orozco, Amaia. (2010) Global Care Chains. Toward a rights-based global care-regime. INSTRAW (now part of UN Women): Santo Domingo; United Nations Research Institute for Social Development (2010) Why Care Matters for Social Development, UNRISD Research and Policy Brief 9, UNRISD: Geneva; United Nations (2012) Resolution adopted by the General Assembly 66/288. The future we want. A/RES/66/288.

Victim blaming Տուժողին պարսավելը

Տուժողին կամ զոհին պարսավելը որոշակի չափով առկա է բռնության բոլոր դրսևորումներում որպես տրամաբանական աղավաղում, համաձայն որի բռնության տուժողին կամ զոհին է վերագրվում տվյալ արարքի պատասխանատվությունը: Հաճախ մարդիկ շրջակա աշխարհի արդարությունը և անվտանգությունը հարցականի տակ չդնելու համար փորձում են բռնության դրսևորումները բացատրել տուժողի վարքագիծը խնդրարկելով: Սա հոգեբանական ինքնապաշտպանիչ միջոց է, որն անհատը օգտագործում է ենթագիտակցաբար՝ ինքն իրեն հուշելու, որ բռնությունից խուսափելու համար չպետք է վարվել այնպես, ինչպես տվյալ բռնության զոհը, օրինակ՝ ուշ ժամին մենակ դուրս չպետք է գալ, որոշ թաղամասեր չպետք է գնալ, դուռը բաց չպետք է թողնել, սադրիչ հագուստ չպետք է կրել և այլն: Տուժողին պարսավելը մեղքը փոխանցում է տուժողին և դրանով շեղում ուշադրությունը դեպի զոհի ենթադրյալ պատասխանատվությունը, արդյունքում բռնարարի կամ զոհարկողի վարքը և պատասխանատվությունը մնում են անձեռնմխելի: Սեռահեն բռնության պարագայում տուժողին պարսավելու դեպքերը կենտրոնանում հաճախ են կնոջ և իր վարքի վրա և անտեսում են բռնության կառուցվացքային և համակարգային պատճառները, ինչպես նաև անարդարության և անհավասարության սկզբունքները, որոնք պայմանավորում են կնոջ դեմ գործադրված բռնությունը:

Victimization Զոհարկում

Զոհարկումը այն գործընթացն է, որի ընթացքում անհատը կամ խումբը ենթարկվում է վնասակար, անարդար, անհավասար կամ բռնություն ենթադրող վերաբերմունքի:

Զոհարկման տեսակները

- **Առաջնային զոհարկում**, երբ անձը կամ խումբը անմիջականորեն ենթարկվում է բռնության, ճնշման, խտրության կամ իրավախախտման:
- **Երկրորդային զոհարկում**, երբ զոհը ենթարկվում է լրացուցիչ հոգեբանական, իրավական կամ սոցիալական ճնշումների, օրինակ՝ իրավապահ մարմինների, հասարակության կամ լրատվամիջոցների կողմից մեղադրվելով, չլսվելով կամ անտեսվելով:
- **Ինքնազոհարկում**, երբ անձը կամ խումբը յուրացնում է իր՝ զոհի կարգավիճակը և սկսում է ինքն իրեն ընկալել այդ դերի մեջ՝ սահմանափակելով իրինքնավարությունը կամ դիմադրության հնարավորությունները:

Violence against women

Կանանց նկատմամբ բռնություն

Սեռահեն բռնության ցանկացած գործողություն, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել հանրային կամ անձնական կյանքում կանանց ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական տույժի կամ տառապանքի՝ ներառյալ նման գործողությունների սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայական զրկելը: Կանանց նկատմամբ բռնությունը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.

- Ընտանիքում տեղի ունեցող ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն՝ ներառյալ ծեծը, իգական սեռի երեխաների նկատմամբ սեռական բռնությունը ընտանիքում, որոշ մշակույթներում օժիտի հետ կապված բռնությունը, ամուսնական բռնաբարությունը, կանանց սեռական օրգանների խեղումը և կանանց համար վնասակար այլ ավանդական գործողություններ, զուգընկերոջ կողմից բռնությունը, ոչ ամուսնական բռնությունը, շահագործումը:
- Ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն, որը տեղի է ունենում համայնքում, ներառյալ բռնաբարությունը, սեռական բնույթի բռնություն, սեռական ոտնձգությունը հասարակական վայրերում, սեռական ոտնձգությունն ու ահաբեկումը աշխատավայրում, կրթական հաստատություններում և այլուր, կանանց թրաֆիքինգը և հարկադիր մարմնավաճառությունը:

- Ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունը, որը կիրառվել կամ թույլատրվում է պետության կողմից՝ անկախ իրագործման վայրից:

Տե՛ս՝ Articles 1 and 2 of the United Nations General Assembly. Declaration on the Elimination of Violence Against Women. In: 85th Plenary Meeting. December 20, 1993. Geneva, Switzerland; 1993.

Women's economic empowerment

Կանանց տնտեսական զորացում

Տնտեսության մեջ սեռահավասարությունը վերաբերում է կանանց և տղամարդկանց կողմից իրենց տնտեսական իրավունքների և արտոնությունների լիարժեք և հավասար կիրարկմանը, որոնք նպաստում են քաղաքականության և հաստատութենական միջավայրերի տնտեսական զորացմանը: Տնտեսական զորացումը սեռահավասարության հիմնաքարն է, որը վերաբերում է ինչպես հաջողության և տնտեսապես առաջընթացի հասնելու, այնպես էլ տնտեսական որոշումներ կայացնելու և դրանց հիման վրա գործելու կարողությանը: Կանանց տնտեսական զորացումը իրավունք է, որն էական նշանակություն ունի ինչպես սեռահավասարության, այնպես էլ ավելի ընդհանրական զարգացման այնպիսի նպատակներին հասնելու համար, ինչպիսիք տնտեսական աճը, աղքատության կրճատումը և առողջության, կրթության ու սոցիալական բարեկեցության բարելավումը:

Տե՛ս՝ UN Women; ICRW (2011) Understanding and measuring women's economic empowerment.

Xenophobia Այլատյացություն

Այլատյացության միջազգայնորեն ընդունված իրավական սահմանում չկա: Ընդհանուր առմամբ, այլատյացությունը ենթադրում է խտրության դրսևորում անհատի նկատմամբ, որն ընկալվում է որպես օտար կամ տվյալ համայնքին կամ ազգին չպատկանող: Հաճախ այլատյացության ենթարկվում են նաև չտարբերվող ֆիզիկական հատկանիշներով, ազգակցական նույն ծագումն ունեցող մարդիկ, օրինակ, երբ նրանք վերադառնում են իրենց համայնք և համարվում օտար կամ դրսեկ:

Տե՛ս՝ UNHCR Guidance on Racism and Xenophobia